

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁԻՆԵ

72(72). ՍՈՂՈՄՈՆ ԻՍԱՍՏՈՒՆ ՈՒ ԱՆԲԱՏԸ

Թաքավորը մի պրիկազ ա պաճ թողըմ, որ ով որ, որ իմաստուն Սողոմոնին ջըթնի, նրան, մնչել իրան գյանքի վերջը, ես նրա ապրուստը կտամ: Հա: Ու գյուղերըմ, քաղաքներըմ, ռայոններըմ պատերից հետ պլակատնի եմ կպցնըմ, որ ժողովուրդը կարթան, իմանան, որ քյնամ թաքավորի հետ պայմանավորվեն:

Էտ ա իմ օրըմը մի ախքատ մարթ մի կին ունի, էրկու ըրեխա ունի, օրեն հացի կարոտ, կարըմ չի ապրի էտ մարթը: Գյուղն ա տուս կյալի, քյնըմ ա տենըմ պատերիցը կպցրած էտ պլակատները, թաքավորի պրիկազն ա, որ ով որ իմաստուն Սողոմոնին ջըթնի, ինձ հասցնի, նրան մինչև գյանքի վերջը մի ապրուստ կտամ: Էտ ա ուրախ-ուրախ կյալիս ա տուն:

- Այ կնիկ, բա սիե պաճ կա, թաքավորը մի պրիկազ ա տվել սօրի, ես էլ եմ քյնըմ:

Կնիկը թե.- Այ մարթ, բա տուս ի՞նչ ես իմանըմ իմաստուն Սողոմոնին, նրան որդե՞ղ ջըթնես, որդեղեք, նրան ճանաչըմ ե՞ս:

- Ի՞նչ անեմ, այ կնիկ,- ասըմ ա,- ես էլ էն ուրուշների պես:

Էտ մարթը վեր ա կենըմ քյնըմ հասնըմ թաքավորին, քյնըմ ա տենըմ՝ ամբողջ մասսան կիտված: Մեզ նման ախքատ մարթիքը դիպի թուփ ըլած թաքավորի մոտ՝ պայմաննի եմ կապըմ: Պայմաննի եմ կապըմ, էտ պայմանի մեջ թաքավորը շեշտիլ ա տալի. «Եթե իմաստուն Սողոմոնին ջըթնեք, մի ամսեն ժամանակ ա, իմաստուն Սողոմոնին ջըթնեք, կպիրեք ինձ կիսնձնեք, ուրեմը միչել ծեր գյանքի վերջը ապրուստը ես կտամ, կուտեք կապրեք»:

Իսկը ջըթնելու համար երկու խան ոսկի ա տալի՝ ծախսի համար, ճանապարհի քյնալու

համար: Էտ ա բոլորը իրանց պայմանները կապըմ են, էտ մարթն էլ պաճ ա ասըմ:

Թաքավորն ասըմ ա.- ի՞նչ ես պահանջըմ:

Թե.- Թաքավորն ապրած կենա, ծեր պրիկազի հիման վրա ես էլ եմ եկել:

- Հա, կարա՞ս իմաստուն Սողոմոնին ջըթնես:

- Կաշխաղենք,- ասըմ ա,- որ ջըթենեք:

Էտ ա թաքավորը պայմանըմ կյորըմ ա, որ. «Սի ամսեն ժամանակի, եթե իմաստուն Սողոմոնին ջըթնես՝ մինչել քու գյանքի վերջը ապրուստ կտամ, եթե կխափես, չես ջըթնի՝ կյլուխըտ կտամ»: Պայմանի մեջ շեշտած ա, էտ ա տիե պայմանը կապըմ ա, էրկու խան ոսկին իրան տալիս, էտ մարթը կյալիս ա տուն, էտ ոսկին տանըմ ա մի երկու ջվալ ցորեն առնըմ ու տանըմ ճըղացցըմ աղըմ, ըրեխեքը սոված կտորվըմ են, պիրըմ ա ուտըմ են, ապրըմ:

Կնիկը չու-չուշտ.- Այ մարթ,- ասըմ ա,- դե վե կաջ քյնո՞ւ է՛, մահ ուտեք մենք,- ասըմ ա,- ամիսը քյնոց, օրերը քյնոց, վե կաջ քյնո՞ւ:

- Այ կնիկ,- ասըմ ա,- որդե՞ղ քյնո՞ւ, ես ի՞նչ եմ գիղըմ իմաստուն Սողոմոնը ո՞վ ա, ի՞նչ եմ գիղըմ նա որդեղ ա: Ես ո՞նց քյնո՞ւ:

- Այ մարթ,- ասըմ ա,- կյլուխտ կյրո՞վ ես տրել,- ասըմ ա,- քյնո՞ց: Վաղը, մյուս օրը,- ասըմ ա,- վատ կըլի հետևանքը:

- Այ կնիկ,- ասըմ ա,- մինչև ժամանակը կամ ես կենեմն, կամ՝ թաքավորը, մի՞ն ու մի՞ն կենեմնեք,- ասըմ ա,- ես ի՞նչ եմ գիղըմ իմաստուն Սողոմոնի տեղը:

Սի տասնիկըմ օր անց ա կենըմ էտ եկած պայմանից հետո, մի ըրուգու մի մուրցկան կյալիս ա տիանց տուրը կտորըմ: Հա:

Թե.- Քեռի ջան,- ասըմ ա,- էս քշեր,- ասըմ ա,- խի՞ չեք ինձ,- ասըմ ա,- տեղ տա՛ մնամ:- Նա:

Ի՞նչ անեն, ախքատ մարթիք են, զոռի մի էրկու օրվա ցորեն են տվել, ուտըմ են: Կնիկը

մարթին ասըմ, մարթն էլ կյնգանն ասըմ ա.-
Մթածն թե մենք շատ լավ օրի ենք.- ասըմ ա:

Կնիկն մարթին ասըմ ա.- Կյլուխտ կրծավ ես
տրեւ,- ասըմ ա.- մեկ էլ նորից մի դրադի, մենք
ախքատ պահող եմք.- ասըմ ա.- մենք էլ ախ-
քատ ենք:

Դալըմ են ասըմ, բայց դե իմաստուն Սո-
ղոմոնն ա է՛, տա հասկանըմ ա տիանց գյափը:
Վերջը մարթ ու կնիկ համաձայնվըմ են, որ
տեղ տան: Մի քչեր ա էլի, մի ըրուգու ա:

Էտ ա մարթը ասըմ ա.- ոչինչ, ոչինչ,- ասըմ
ա.- համեցենք:

Կյալիս ա տուն, ինչ որ իրանք ուտըմ են, էն
էլ ղոնաղն ա ուտըմ: Ըռավոտը լիսանըմ ա, աս-
սըմ են ղոնաղը կըմ:

Ղոնաղը քյնըմ չի, որ տեղիհան չի ըլըմ, է-
սօր, էքուց, մյուս օր, չորրորթ օր, հինգերորթ
օր, չի քյնըմ, շատ ջղայնանըմ են, մարթ ու
կնգա մեչ կոխվ ա ընգնըմ:

Կնիկն ասըմ ա.- Տու ընթունեցիր:

Մարթն ասըմ ա.- Տու ընթունեցիր:

Բայց, իհարգե, էտ կոխվները դալըմն են
անըմ, ղոնաղի իրեսին չեն անըմ: Որ շատ
կռվըմ են, տիանց կոխվները տա հսկանըմ ա,
իմաստուն Սողոմոնն ա, բայց իրանք չեն ի-
մանըմ, եթե իմանան իմաստուն Սողոմոնն ա,
սիե պըմբակի վրա կպահեն, ծեռներնուն,
կլխներնուն նստցրած, բայց չեն իմանըմ:

Էտ ա, որ կյալիս ա ժամանակիցը մի
տանսհինգ-տասնչորս օր մնըմ ա հա՛, էլ դի-
մացըմն են կռվըմ տրանք: Որ դիմացըմն են
կռվըմ հա՛, ասըմ ա, էտ մարթն ասըմ ա.- Մի
խոսկն էլ ես ասեմ:

Ասըմ ա.- Ասա՛:

- Իզուր տեղը,- ասըմ ա.- տուք մարթ ու
կնիկ միք կռվի, տենըմ ե՞ք էն ջլավի պլիրը՝
ծեգ հետ մըչն ուտիլ,- ասըմ ա.- ես ըստեղից
չեմ քյնալ, իրան օրըմ միք կռվի:

Էտ ա տիանց մնացել են կրակըմ, կրակի
միջին: Էտ մարթը էքանը մնըմ ա, որ ժամանա-
կից մնըմ ա մի հինգ օր՝ պայամնիցը: Որ մի
հինգ օր ա մնըմ հա՛, էտ մարթը հա՛ անհայ-
տանըմ ա, քամի ա տռռնըմ տանիցը կորչըմ:
Որ անհայտանըմ ա հա՛, ու ասիլու ժամանա-
կը մոտիկ ա, ճամփա ա ընգնըմ քյնըմ, որ թա-
քավորի պայամնի վախտը մոտիկ ա: Քյնըմ ա

տոչնի ամսի վերջին հասնըմ թաքավորին:
Քյնըմ ա տենըմ է՛ շատերը իրանց առաջ պա-
ման կապողները՝ ոչ միւն չի քյթել, ո՞վ կարա
իմաստուն Սողոմոնին քյթընի: Քյնացողներին
թաքավորին խափիլու համար կսիցը կես են
արել մի կիսանը դարբազի ներսի կողմիցն են
կախ արել: Բոլորն էլ տիե խափել են, ոչ մեկը
չի քթել: Որ հերթը մնըմ ա էտ մարթին հա՛,
թաքավորն ասըմ ա.- Յը,- ասըմ ա.- քթե՞մ,-
ասըմ ա.- իմաստուն Սողոմոնին:

Էտ ա խեղճ-խեղճ ասըմ ա.- Թաքավորն
ապրած կենա,- ասըմ ա.- չէ՛, չքթեմ:

Որ ասըմ ա՛ քթեմ հա՛, տա էրկու հատ վա-
զիր ունի՝ էտ թաքավորը, էն մի վազիրին ա-
սըմ ա.- Վազիր,- ասըմ ա.- էտ մարթն,- ասըմ
ա.- խափիլու համար,- ասըմ ա.- դատը քե եմ
տալիս,- ասըմ ա, տու դադ արա:

Ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, ես
դատ անեմ: Ես տրա դաղը սիենց եմ որոշըմ,
որ պիրենց մեչ տեղիցը կես անենք, մի աչքը,
մի կուրը, մի ոտը մի ղուլն ընգնի, կեսն էլ մի
ղուլն ընգնի, տանենք դարվազիցը կախ ա-
նենք կեղը՝ ներս դրիցը, կեղը տուս դրիցը,
որ ժողովուրդը կարթան իմանան, որ ինչ ա
թաքավորին խափիլ:

Տա իրան դաղն անըմ ա, միէլ մնըմ ա երգ-
րորթ վազիր:

- Վազիր, բա տու ի՞նչ դադ ես անըմ, մեկ էլ
տու ասա:

- Թաքավորն ապրած կենա,- ասըմ ա.- տա
լավ չդաղեց,- ահըմ ա.- ես ասեմ, որ տրան
մանղը՝ կտորեն, մանղը, ածեն ժարովնիկի
մեչը սիե տիժի-վիժի անենք,- ասըմ ա.- որ
քյնա գիղենա, որ թաքավորին խափիլ ին-
չըմն ա:

Էտ ա տա, որ տիե ա ասըմ հա՛, չէ՛ որ սե-
ղանին նստած մարթիցը աչ ու ծախ մտիկ են
անըմ, ա՛յ մարթ, էս մարթը մտիկ ա անըմ տե-
նըմ, որ իրանց տանի են մուրացկանը, էն ախ-
քատ մարթու քմակին երգրորթ սեղանին
նստած: Ինչ ա գիղըմ, թե նա իմաստուն Սողո-
մոնն ա, միայն գիղըմ ա, որ իրան տանը
նստածն ա: Էտ մարթը հա մատ ա պրցնըմ
թաքավորին, էտ աղքատը:

- Թաքավորն ապրած կենա, կարելի ա՞ մի
պլն էլ ես ասեմ:

Ասըմ ա.- Ասա՛:

- Էտ քու վագիրն,- ասըմ ա,- որ հեշտ ասըմ ա. կեսընը կեսը մեչ ղոլեց կախ անել, կեսը՝ տուսի ղոլիցը, գիղես տոմ ի՞նչ մարթ ա:

- Ի՞նչ մարթ ա:

- Տրոմ հերը,- ասըմ ա,- դասաբ ա ըլել,- ասըմ ա,- տոմ ուզըմ ա, որ իրան հոր փեշակը պընըցնի: Նրա համար էլ ուզըմ ա էտ խեղճ մարթին կիսիցը կես անի: Իսկ են մեկն էլ հա-կառակըմ ա, որ ասըմ ա՝ չէ՛, մանդր կտորենք տիժի-վիժի անենք,- ասըմ ա,- տրոմ հերն էլ,- ասըմ ա,- բազարնեըմ,- ասըմ ա,- տվարի-ոչ-խարի թոքերից տիժի-վիժի անող, բազարի դրաղին ծախիլիս ա ըլել, տոմ էլ իրա հոր փե-շակն էր ուզըմ:

Թաքավորը տիանց հարց ա տալի.- Էս մարթը դուզ ա ասըմ՞:

Թե.- Դա՛:- Էրկուսն էլ ասըմ են.- Ճիշտ ա ասըմ:

- Ես էլ,- ասըմ ա,- իմաստուն Սողոմոնն են,- ասըմ ա ու հա՛՛ անհայտանըմ, քամի ա տռռ-ընը ըտիան կորչըմ:

Էտ ա թաքավորը են առաչուց են մարթը, որ ասել ա չըթոմ է՛, թաքավորը համարըմ ա, որ տոմ ուրենը ծաղրել ա էլի, պիղել ա, բայց սուտ ա ասել: Էտ չէ, որ նա ասըմ ա.- Ես ի-մաստուն Սողոմոնն են:

Նագիրների իրանց հոր արիեստն էլ ասել ա, էտ ա պիրըմ ա թաքավորը նորից տրոմ մեծ ոսկի ա տալի, միչոց ա տալի, էտ մարթը կյալիս ա ճոխ ապրըմ:

73(73). ՍՈՂՈՄՈՆ ԻՍԱՍՏՈՒՆԸ

Մինն էլ Սողոմոն իմաստունիցը ասեն:

Սողոմոն իմաստունը, ճիշտ ա, իմաստուն մարթ ա ըլել, համա ամեն մի գեներանու, ամեն մի գեներանիների լեզուն էլ իմանըմ ա: Ժամա-նակին, մի օր կնիկը տրան ստիպըմ ա, որ քյնըմ իմ հերանց տուն: Ծի՛ն նստըմ են քյնըմ իրան տուն, շատ են կենըմ ըտի, քիչ են կենըմ, նորից վերադառնըմ են տուն: Կընիկն էլ ծիու վրա նստած՝ մի ըրելխեն էլ խըտտին, մի ըրելխեն էլ՝ թաղքին, ծիի պեռն էլ վրեն, ծին էլ ծանդրած, նստած քյնըմ են, մի քուռակ էլ

եղնուց կյալիս ա: Էտ քուռակը ծեն ածըմ ա, տրան ասըմ ա.- Մի քիչ կամաց քյնա, յըսէ կյամ հասնեն:

Նիե որ խըրխընըմ ա, ծին պաղախանըմ ա, ասըմ ա.- Մինն ինձ վրա, մինը փորըմը, մի-նը խըտտին, մինը թաղքըմը, մինն էլ ինքը, յըսէ ծանդրած, են ո՞նց ա, ես քյնըմ են, տու չես կարըմ կյառ:

Սողոմոն իմաստունը եղնուց ծիի եղնա քյնըմ ա, ծըծաղըմ ա, կնիկն էլ՝ ծիու վրա, նրան ըստիպըմ ա, ասըմ ա.- Էտ ի՞նչ ասեց, որ տու ծըծաղեցիր:

Ասըմ ա.- Զի կարելի ասել, որ ասեն, ես կծահանամ:

Թե.- Որ մահանաս էլ, պիտի ասես:

Ասեց.- Դե կքյնըմք տուն, թըղառիք կանեք, կասեն:

Էն ա քյնըմ են տուն, թըղառիք են անըմ, ապրանք մորթըմ, հաց-պան թըրազըմ, որ Սո-ղոմոն իմաստունը խոսկն ասիլ դի ու մահա-նալ: Շունը տըռռըմ վեր ընգած ա ըլըմ, մի որցակ, հավերն էլ՝ տըռռըմ: Որցակը շան դա-քովը կյալիս ա որ անց կենա, անց կենալու թուլըմը ծուղորուղու ա կանչըմ: Կանչըմ ա, շունը վրա ա թընըմ, որ փընըն, ասըմ ա.- Տու, մեր տերն ես մահանալ դի, տու, քեփիտ քյոք, եկել ես խաղ ես կանչըմ՞:

Ասըմ ա.- Եթե էտ խելքին ա, թող մեռնի, ինձ ինչ... ես իմ կախտնիցը ոչ-ոքի չեմ ասըմ, տոմ ինքը մի կին ունի, իրան կախտնիցը կա-րըմ չը իրան մեչ պահի, որ ես պամը կյալիս չկյառ:

Էն ա հա՛՛ ես Սողոմոն իմաստունը իմանըմ ա, որ էտ գործը եթե անեն, սիե դի ըլի: Էն ա կյնգանը փընըմ ա մի լավ թակըմ, ընքելը ժողովուրթին էլ են իք անըմ, քյնըմ են: Էտ գործն էլ ըլտ մընը ա տիե: Էտ էլ վերջացավ:

74(74). ԸՍԿԱՆԴԱՐ ԹԱԶԱՎՈՐԻ ՊԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Եղել ա, եղել չի մի թաքավոր ա ըլել, լավ խղճով թաքավոր ա ըլել էլի, մի հատ տղա յա ունեցել, անըմը՝ Ըսկանդար: Ինքը մահանա-լու ժամանակ, տոմ ինքը գեներանի ժամա-

նակ, իր գահը իրա տղին և տվել, ասել ա.- Ես իմ գահը տալիս եմ իմ տղին՝ Ըսկանդաթ թաքավորին: Կիշխես, կղեկավարես, ոնց որ ես եմ եղել մասսայի դեմ, տու մի պան էվել կըլես, ինձանից եթե տու էվել ըլես, ինձ կիշխեն և ինձ օղորմի կտան:

Էտ մարթը մահացել ա, տղեն գահը վեր ա կալել մի էրկու-իրեք տարի թաքավորություն ա արել: Մտածել ա, մտածել, ասել ա.- Որ իմ հերը մահացել ա հա՛, ես էլ դեմ մահանալ, չէ՞, բա ո՛ր եմ ըստի կեննմ, մացել եմ, որ աշխար կա, որ ընդի մահաննմ չեն, կարա՞մ քյննմ ես ընդեղ:

Ասնմ ա ու էտ գահը կյնգանը հանձննմ ու մի ծի նստնմ, ոնց որ կարնմ ա, ծիյու վրա պան տըննմ, մի թագի էլ եղենն քցնմ՝ շուն, որ իրան հավաղարիմն ա ու ճամփա ընգննմ:

Շատ ա քյննմ, քիչ ա քյննմ, մատաղ քեզ, քյննմ ա տեննմ՝ մի մարթ մի դուզնմ, մի արոր վե կալած, գիդե՛ս էլի՝ Ելթ, մի ծիր էտ դուզնմը քյնցել ա ու մի լուծ եզը լըծած ու եկել ըստի նստել, եզնիքն էլ թող արած նստած, որ քյննմ ա, ճընանչնմ ա էլի, ասնմ ա.- Սկանդաթ թաքավոր, էտ ո՛ր ես քյննմ:

Ասել ա.- Ա՛ քե մատաղ.- ասել ա.- մացել եմ, որ աշխար կա, ընդի մեռննմ չեն, քյննմ եմ ընդի:

- Այ մարթ,- ասել ա,- քյննմ մի՛, էս դուզը տեննմ ե՛ս:

- Չա՛:

- Օրական մի ակոս դեմ քյննալ, էս էրկուհարիր տարի, էս դաղանը էրկուհարիր տարինը գոռի դեմ վարիլ, էն ա ըստի իմ կըշտին կաց, էրկուհարիր տարի ապրես բոլ ա էլի:

Ասել ա.- Չէ՛, քյննալ դեմ:

Ու տու հաջողութիւն ա տվել ճամփա ընգել, եզնիքն ու էտ մարթին բրածխել ա ու քյնցել: Քյնցել ա տեհել՝ մի տեղ մի դուզնմ, է՛, դուզ ա՛՝ կորեկ արած, լընգ-լընգնմ ա: Մի մարթ մի խուրջին խնձոր ա կապել, կըշտին տըրել ու նստել կըշտին: Տա էլ ա ճընանչնմ, ասնմ ա.- էտ ո՛ր ես քյննմ Ըսկանդաթ թաքավոր:

Ասնմ ա.- Քյննմ եմ էնդի, էն աշխարը, որ ընդի մահաննմ չեն:

- Այ մարթ,- ասել ա.- ըստի իրեքհարիր տարի ես անջաղ դեմ էս կորեկը հընմիլ, իրեք-

հարիր տարի ա էլի, իրեքհարիր տարի ունըրը ունես, ըստի կաց ո՛ր ես քյննմ:

Ասել ա.- Չէ՛, քյննալ դեմ:

Մատաղ քե, ճամփա ա ընգել, շատ ա քյնցել, քիչ, քյնցել ա տեհել մի մարթ, մե՛ծ անտառի դրաղի նստած, մի ծառ ա կտրել ու նստել ըստի: Տա էլ ա ճընանչնմ, ասնմ ա.- Ըսկանդաթ թաքավոր, էտ ո՛ր ես քյննմ:

Ասել ա.- Մացել եմ, որ աշխար կա, ընդի մահաննմ չեն, քյննմ եմ ընդի:

- Այ մարթ, է՛, ո՛նց դես քյննալ, աղաքըտ օվկյանոսի եմ, ծովեր եմ, չոր ճանապարհ եկել ես, քյննալ դես ծովի դեմ առնիլ, տու ո՛նց - դես քյննալ էն աշխարը, էն աշխարը հեռու, կորած, քե որ անդուկնմ ա, չես կարա, արի ըստի մնա, չորսհարիր տարի էս ծառը գոռի դեմ կտրիլ, չորսհարիր տարի ունըրը ունեն, ըստի մնա՛:

Անեն մինը հարիր տարի ըվլաննմ ա:

Ասնմ ա.- Չէ՛, քյննալ դեմ:

Ասնմ ա.- Տու ես գիղըն, պա՛րի ճանապարհ:

Քյննմ ա, քյննմ ա՛՝ օվկյանոսի դեմ առննմ, օվկյանոսի վրա ոչ մի պան չկա, ինքը կարալ չի քյննալ, մննմ ա դրաղին նստած՝ մտածիլիս, որ իմ աշխարը, իմ երգիլը թողեցի տուս եկա, դե միի մեռնիլը բոլորի համար ա, խի՛՞ եկա մնացի ըստի, հիմա էլ ի՞նչ անեն, ճուրն ընգնեն, ո՛նց կըլի, ի՞նչ անեն: Տա մի քանի սուտկա ճըրի դրաղին մննմ ա՛՝ մտածիլով: Չէ՛ որ մարթ ա, քննմ էլ ա էլի, որ քննմ ա, հա՛ տեննմ ա էրազնմ մի դուշ եկալ, ասեց թե.- Եսքան պրիպաս ունենմ, ես էկել եմ, որ քեզ էս օվկյանոսի վրովն անց կըցեննմ էն աշխարը տանենմ, կարա՞ս վրես նստես:

Ասել ա.- Կնստե՛:

Աչկը պոց ա կալել տեհել, որ էտ դուշը եկած վեր եկած ա:

Էտ դուշը լուզու ա առել, ասել ա.- ճանապարհն ծեն դեմ ածիլ, ամեն ծեն ածիլեն էս մի կտոր պանը պերանըս կըցես:

Տե՛հ անիլեն՝ քյնցել ա, թամուզ էտ պաները հատել ա, որ մեկ ճըրի իրեսին ա, որ ծեն ածել ա հա՛, էլ պան չկա, տոնալը հանել ա իրան էս փափուկ տեղիցը կտրել ու քցել դուշի ընեխը, դուշը տեհել ա, որ նա իրանից ա, կեռել չի, պահել ա: Տարել ա ցամաքնմ վե տը-

րել, որ են աշխարհն ա, ընթերցանը լուզվի տակիցը են կտորը հանել տղրել վրեն, իրան բըլ-բուլիցը հանել քսել, ասել.- Տղա ջան, երիտասարդ տղա ջան, որ տուլ քու ջանին խղղախը չարիր, են աշխարհը սա յա, որ միի էլ պան ա էլի կըլի, որ մըտքովտ անց կենա, որ ետ քյնա, ես ըլետ ըստի պահակ, շեզ անց կկըցեն են կողմը:

Չա՛, ետ քյնըմ ա տենըմ մեծ բաղ ա, մեծ բաղ՝ կանա՛ջ, կանա՛ջ, բայց մի կնիկ ա, մեկ էլ մի ախճիկ: Էտ կնիկն ասըմ ա.- Բալա, տուլ ո՞նց ես եկել ըստի:

Պատմըմ ա, որ սհե, սհե, սհե:

Ասըմ ա.- Դե որ եկել ես, իմ ախճկանս մարթե՛ս, ասըմ ա.- առ, բայց ծեզ ժառանգ չի ըլիլ: Ըստի կկենաս, քանի տարի կկենաս, մեզ հետ կկենաս, կապես:

Կենըմ ա, ապրըմ ա, կյալիս ա մի չորս-հինգ տարի անց կենըմ, մենըմ չի, ջահել էլ կենըմ ա: Միտըը թեքվըմ ա էտ տղեն՝ էտ Ըսկանդոթը թաքավորը, որ քյնա իրան հոր երգիրը, համա հինգհարիր տարի անց ա կըցել, հոր երգիրը որդի՞ ա:

Ասըմ ա.- Տղա, ուզըմ ե՞ս քյնա:

Ասըմ ա.- Մերա, միտս ա ընգել ընդի իմ հոր գործը, իմ ծննդավայրը, ինձ թուլ կտա՞ս քյնմ:

Ասըմ ա.- Թուլ կտամ, ես հուլ ոչ ընթունիլու եմ դեմ, ոչ պաց թողիլու, ինը տենեց ա, բալա ջան, քյնըմ ես՝ պոթի ծանապար:- Ասըմ ա.- դե որ քյնըմ ես, քե իրեք խնձոր դեմ տալ, էտ իրեք խնձորը կըպահես, ոչ մի մարթի չտաս, կքյնաս քու հոր երգիրը կըտենաս, ըլետ ոնց որ քյնցել ես, մեկ կկյա, թե ետ կյըլճկան ես: Զուլ հոր երգիրը հմի վերացած, կորած ա, կքյնաս կտենաս ու ետ կկյաս:

Ասել ա.- Շատ լավ կըլի:

Էտ իրեք խնձորը կապել ա մի աղլուխըմ ու տվել էտ տղին, ասել.- Պոթի ծանապար, տրա ոչ մի մարթի չտաս հա՛, էտ խնձորը ո՛չ - կուտես, ո՛չ պան, կպահես:

Վեր ա ունըմ էտ խնձորը կյալի, կյալի են-դի, տենըմ էտ դուշը ընդի յա՛ իրա: Էտ դուշը էլի իրա վրա մտտըցըմ ա պիրըմ ես դուլի սահմանը: Կյալիս ա տենըմ, որ էտ ծառ կտորող մարթը պըռավել ա՛, հատել՝, ծեռից-ո-

տից ընգել ա՛, ոչ ծուր տվող կա, ոչ պան տվող կա:

Ասել ա.- Ըսկանդոթը թաքավոր, ետ ես է-կե՛ն, քու ջանին մատաղ, որդի քյնըմ ես, ինձ էլ տար էլի:

Ասել ա.- Չէ՛, կարալ չեն տանեմ:

Բըրախել ա էկել: Էկել ընդի, տեհել, որ էտ կորեկը հնձողն էլ հընձել ա, իրեքհարիր տարուցն ավել ա, ու էտ էլ ա ծեռից-ոտիցն ընգել՝ սոր-էքուց ա, տա էլ ա դանչաք արել Ըսկանդոթը թաքավորին.- Ետ ես քյնըմ, ջահիլ քյնցել ես ջահիլ էլ կյալիս ես, ամանգյունու-դու, ինձ էլ տար հետըտ:

Ասել ա.- Չէ՛, կարալ չեն տանեմ, մի ծի յա, ես մի մարթ եմ:

Եկել ա տեհել էտ չուք վարողը՝ եզնիքն էլ են վե տառել, ինքն էլ եզան կըշտին վե տառած, ծեն էլ չկա, են ա հոնգել ա: Տա էլ ա դանչաք արել.- Ըսկանդոթը թաքավոր, որ քյնըմ ես, ինձ էլ տար:

Ասել ա.- Չէ՛, կարալ չեն:

Եկել ա իրան երգիրը, եկել ա տեհել, որ ոչ մի պան չկա, դո՛ւզ, դուզ ա, ժողովորթը թուփ ա ըլել, ասել ա.- Մոցել ե՞ք, հին պատմութիւն արած կըլեն, որ ըստի ծեզ թաքավոր ա ըլել:

Ասել են.- Դա:

Էտ ժողովորթից մոցած են ըլել էլի: Ասել են.- Թաքավորին մի տղա ա ունեցել, անըմ՝ Ըսկանդոթ, իրան գահը տվել ա իրան՝ էտ Ըսկանդոթը թաքավորին, ինքը քյնցել՝: Էրկու տարի էտ Ըսկանդոթը թաքավորը դեկավարել ա ու Էրկու տարեն եղը անհայտացել, կորել, էլ նրա տեղը մաշուր չի:

Ծրծաղել ա, ասել ա.- Ես եմ:

Ասել են.- Ո՞նց ես տուլ, բա էսքան տարեմնի ա անց կըցել:

Ասել ա.- Դըլա ես ինչ տեղը քանդեցեք, քանդեցեք.- ասել ա.- իմ հոր թուլեն, ծիանով թուլեն պաց կըլի, տակին՝ իրա տակին, ան-կին քարեր կա, էտ անկին քարերը կիսմեք, ու ժողովորթին կառավարեն:

Է՛, ժողովորթը վրա են տառել, քանդել են, եղ են տվել, իրոք, թուլեն քըթել են: Ժողովուր-

¹ Բանասացը պտեք է ասի՝ մահացել (ծանոթ. բանահավաքի):

թը եկել աս են եզրակացութեան, որ սա ճիշտ աս, ուրեմը Ըսկանդոնթ Թաքավորը սա յա:

Ասել աս.- Այ ժողովորթ, դե տուք ապրեցեք, քահել-քիվան են, ես ետ են տառնըմ, որդեղ է-դել են, ընդի են քյնըմ:

Ու ժողովորթին բարեկէ աս ու ըստին ըսկսել ետ տառնալը: Ետ աս տառնել, շատ աս էկել, քիչ աս էկել, տեհել աս՝ մինը հե՛, դի աս տալի.- Ա՛ ճանփին քյացող կաղնի՛, կաղնի՛, կաղնի՛:

Կաղնել աս: Էկել աս հասել, ասել աս.- Ես քե մատաղ.- ասել աս.- ճանփնորթ Ըսկանդոնթ Թաքավոր, մի քահել հարսը կա, էտ քահել հարսը են աս հղի աս ըլել, իրա ժամանակն աս, ուզըմ աս ազատվի՛ ազատվըմ չի, խընծիւր աս ուզըմ, թե խընծիւր ունես, խընծիւր տու:

Մտածել աս, մտածել, մինը հանել իրան տվել:

Ասել աս.- Ապրես:

Շատ աս քյացել, քիչ աս քյացել, տեսել աս ըլետ մինը դի տալով կյալիս աս հե՛...

Էտ մի խընծիւրը որ տվել աս, ներողութին, մտիկ աս արել տեհել, որ արթեն իրան մազը պան ընգալ: Շատ աս քյացել, քիչ աս քյացել, հլա մինն էլ աս, դի տալով կյալիս աս, ասըմ աս.- Աման գլունդուկ.- ասել աս.- մի տղա կա,- ասել աս.- հիվանդ: Ջահել, երիտապարդ տղա յա, քսաներկու տարեկան հասակըմ հիվանդ աս, խընծիւր աս ուզըմ, թե խնծիւր ունես, մինը տու:

Հանել աս մինն էլ տվել: Շատ աս քյացել, քիչ աս քյացել, տեսել աս, որ երկու քահել տղա, ուրեմը, է՛, պար կյալով, աղաքն են կյալի, էտ ըխմկեքն էլ, տղեքն էլ կյալիս են հասըմ իրան:Ասըմ աս.- Զը՛, ի՛նչ աս:

Ասըմ աս.- Քե մատաղ, նոր հըրսանիք ունենք, պուճուր հարսն ենք տանըմ, մազըմը խընծիւր չկա, խընծիւր ունես, մի խընծիւր տու:

Էտ մինն էլ վեր աս ունըմ տրան տալի:

Արթեն պըռավըմ աս: Ելըմ աս, քյնըմ աս, հասըմ էտ դուշին: Էտ դուշըմ էլի տանըմ աս ընդեղ վե տընըմ: Էտ կնիկը տեսըմ աս, որ Ըսկանդոնթ Թաքավորը պըռավա՛ծ, չալիկը ծեռին, ինձ դայդի կուչ-կուչ անիլեն՝ կյալիս աս: Ելըմ աս բալի աղաքը, ասըմ աս.- Զը՛, Ըսկանդոնթ Թաքավոր բալա, խընծիւրին ի՛նչ ասիր:

Ասել աս.- Մերա, ով ուզեց, իրան տվի:

Ասել աս.- Դե քու գյաքնք աս, տվել ես պըր-ծել, բալա, ի՛նչ անեն:

Ելըմ աս ըսի, պըռաված աս ըլըմ, ըտեղ էլ ուրեմը, ինըմ մնըմ աս, ըսի էլ մահանըմ աս: Ըսի էլ մահանըմ աս, էտ կնիկը ոնց որ աս տանըմ աս թաղըմ աս, տրինեցով վերչանըմ աս, քե մատաղ, պատմութիւնը: Էտ էլ Ըսկանդոնթ Թաքավորը՝:

75(75). ԼԵՆԿ-ԹԵՄՈՒՐԻ ԳՐԱՍԱՆԸ

Մի անքամ էլ Լենկ-Թեմուրը մի քաղաք աս գրավըմ: Սաղ քաղաքը ավերըմ են, ժողովորթին թլանըմ ու կտորըմ են:

Լենկ-Թեմուրը կանչըմ աս իրա հրամանատարներին ասըմ.- Լալ է՞ք թալանել ու կտորել:

Ասըմ են.- Հա՛:

Թե.- ժողովորթը ի՛նչ աս անըմ:

Թե.- Սաղ լալք են ըլըմ:

Լենկ-Թեմուրը ասըմ աս.- Որ լալք են ըլըմ, ուրեմը լալ չեք թըլանել, քյացեք նորից թըլանեցեք:

Լենկ-Թեմուրի զինվորին նորից մտնըմ են տները թըլանըմ, ավերըմ, սպանըմ: Կյալիս են ասըմ.- Լենկ-Թեմուրն ապրած կենա, հըրամանըտ կատարել ենք:

¹ Այն հարցին, թե բանասացը ումից է լսել այս հեքիաթը, մա ասաց. «Ես պատմութիւնը, ինչ որ ճիշտ աս՝ ճիշտը, սկորել են տեխնիկոնըմ: Ըրգները, որ քյացել ենք նստել, ուրոնը, տեխնիկոնըմ սըվորդների պարտադրատուգարն են ըլել ես՝ Ստեփանանան, որ քյացել ենք նստել ենք, ըրգները սկսել ենք... պատմութիւն արել, որը որ ինձ տիր աս եկել, ես ինձ կըշտին կըրել են, հա՛ ինձ կըշտին կըրել են՝ պահել, ասել են՝ պան աս էլի, պետկը կկա: Մըտիս չի ով աս պատմել, դե անեմ տեսակ ոայոններից էլ մարթ կար էլի: Հա՛, բա Հայաստանի ոայոններիցը ամեն ոայոնից էլ մարդ կըր, մանըմ ես, Ստալինի ժամանակը դարգեր սկորիւ, հընիկվա դայդի չէր: Ոչ փող ունի, ոչ ուտիւ, ոչ քընիւ, հանրակացարանը կար, ուտիւ չու կար, ես քնի ճաշարանը, ճաշարանըմ գալազ տի, վաթցուն հոջի կա ինձ իրափունքի, վաթցուն հոջու էս ճաշը, էս ճաշը, էս ճաշը, օրեկան իրեք անքամ, քյնին ուտին, կին: Փող չկա, պան չկա, Ստալինը տեխ ավորցներ, բայց հմի տեխ չի»:

Ասըմ ա.- Ժողովուրդը հմի ի՞նչ ա անըմ:

Թե.- Էլի կյուղըմ են, լաց են ըլըմ:

- Զէ, ուրեմը լավ չեք թըլանել, քյնացեք նո-
րից թըլանեցեք:

Նորից են քյնըմ, կյալի գելուցըմ, նորից ա-
սըմ են, որ ժողովուրդը լաց ա ըլըմ, նորից ա
ղաղզըմ:

Վերջը ենքան ա թըլանիլ տալիս, որ վերջի
անքանը կյալիս են, հըրցնըմ ա.- Ժողովուրդը
ի՞նչ ա անըմ:

Ասըմ են.- Սաղ երքըմ են, պար են կյալի,
ծըծաղըմ են:

Լենկ-Թեմուրն ասըմ ա.- Դա՛, ուրեմը ար-
թեն թըլանիլու էլ ոչ մի պան չունեն:

76(76). ԿՅՈՂՆ ՈՒ ՇԱՐ ԱՐԱՍԸ

Պարսկաստան՝ Շահ Աբասի ժամանակ
միշտ կյուղություն ա ըլում, իրանց խազինեն
միշտ կտրվում էր՝ պալատի: Եվ էտ կյուղը
հայտնի կյուղ ա: Եփոր, էտ կյուղին մի քվոր
տղա ա ըլում՝ ջախել, մեծանում ա, մի օր
քյնըմ ա քեռու տուն, էտ կյուղը իրան քեռին ա:
Տուս են կյալի բաղը ման կյալու քեռին և քվոր
տղեն: Էտ տղեն քեռուն ասըմ ա.- Քեռի, ինձ էլ
սովորեցրու կյուղություն:

Ասըմ ա.- Տղա ջան, տու ջախել ես, կարալ
չես կյուղություն անես:

Ասըմ ա.- Կսովորեն էլի քեզանից:

Էտ քեռին ասըմ ա.- Դե ըտի մտիկ արա,
ծառի վրա մի չաթր կա, իրա պընի միչին ծու
ա ածըմ, ես ընենց կյուղ եմ, որ տուս դեմ կյալ
իրան պընեն ծուն ընենց կյուղանամ, որ նա ի-
մանա ո՛չ:

Էտ քեռին ծառին լի ա ըլում և էտ չաթրի
ծուն կյուղանում ա, չաթրը մտնում չի: Իրան
քվոր տղեն էլ մինչև նա ծուն կյուղանըմ ա, ի-
րան քեռու շալվար հանում ա՝ կյուղանում ա,
նա մտնում չի: Եփոր վեր ա կյալի, ասում ա.-
Տեհա՛ր՝ ես չաթրի ծուն կյուղացա, չաթրը
մացալ ո՛չ:

Ասըմ ա.- Քեռի ջան, ես էլ քու շալվարն եմ
կյուղացել, տու մացել չես:

Իսկապես, մտիկ ա անում տենում ա՝ իրան
շալվարը հանած ա: Ասում ա.- Իսկական կյուղ
ես, կարըմ ես կյուղութիւն անես:

Եվ սկսըմ են ըստանք կյուղություն անել,
մանավանդ թաքավորի խազինեն կտրել ա-
մեն ժամանակ: Խազինեն Եփոր կտրում են,
թաքավորի պալատ ասում են.- Ի՞նչ անենք,
որ առաչ առնենք:

Պերում են որոշում են թաքավորի պալա-
տավորնին, որ մի ծուրի կարաս տանինք տը-
նինք ճանապարհի վրեն, որով մտնում են խա-
զինեն, նա կընգնի միչին, արթեն կարալ չի
տյուս կյա, կճանանչենք, թե ով ա: Ըտեղ, ով
մտնըմ ա խազինեն, մի կարաս ծուր են
լցնըմ ու տընըմ ըտեղ: Քեռին ու քվոր տղեն
մի քանի օրից ետ էլի քյնըմ են կյուղության: Ա-
ռաչ քեռին կախ ա ըլում մեչին, քյնըմ ա
մտնըմ, էտ ծիթի կարասի միչին էլ ինչքան
չարջըրվում ա, կարըմ չի տյուս կյա: Քվոր
տղեն մտածում ա, ասում ա.- Ես ի՞նչ անեմ,
ի՞նչ չանեմ:

Պերում ա, որոշում ա, որ քեռու կյուղի
կտրի, որպես չճանաչին: Քեռու կյուղի կտրեց
և տարավ: Առավոտ պալատավորներ եկան,
մտիկ արին՝ մի մարթ կա կարասի միչին՝ ա-
ռաչ կյուղի, կյուղի չունի: Քեռին որոշեցին
տրա ջանդակ տանին կախ անին ախպրի
կշտին, ով որ կյա վրեն լաց ըլի, արթեն
կհայտնաբերվի, որ ես կյուղը տրանցից ա:
Տրա ջանդակ պերում են կախ են անում
ախպրի կշտին՝ մի ծառից: Էտ քեռու կնիկ ու
երեխեք սկսում են լաց ըլիլ: Էտ տղեն ասում
ա.- Ամեն մեկ մի հողի փարչ վե կալեք քյացեք
ճուր, ընդեղ հեռի միչին կռիվ քցեք, տվեք
տու նրա փարչ կտրի, նա քու փարչ կտրի,
ընդի մի լավ լաց ըլեք, համգստացեք, եկեք:

Ըստանք ամեն մեկ մի փարչ վերցնըմ են
քյնըմ են ճուր, հեռի վրեն կռիվ են քըցում,
ամեն մեկի փարչ կտրում են ու սկսում են
լաց ըլիլ, համգստանում են ու կյալիս տուն:

Իրիգուն էտ տղեն տոնըմ ա աշուղ, սազ
վերցնում, էլ առաչ անում, քյնում ա էտ ախ-
պուր պահակների կողք: Էտ պահակները
տենում են իրիգունը մի աշուղ ա կյալի, էտ
պահակներն էտ աշուղին կանչում են, ասում

են.- Կիշեր կացի ըստեղ, մեզ համար նվաքի, մենք էլ ուրախանանք, քնիքն ո՛չ:

Էտ տղեն ասըմ ա.- Ես վախըմ եմ,- ասըմ ա,- Ես լեշ իմ էշ կյողանա:

Վրեն ծիծաղըմ են, ասըմ են.- Այ մարթ, լեշ ո՞նց էշ կկյողանա:

Ասըմ ա.- Դե պայման անենք, որ իմ էշ կյողանա, իմ էշի կին վճարեք:

Տա նվազըմ ա շատ երգար, էտ պահակներ քնում են: Էտ պահակներ եփոր քնում են, վեր ա կենում իրա քեռու ջանդակ տընում ա էշի վրեն տանում ա իրանց տուն ու հետ կյալի ու ընդեղ իրանց մոտ քնում ա: Առավոտ պահակներ որ վեր են կենում վճացվելու, տենում են, որ էտ լեշ չկա, կյալիս են մեկ մեկի ասում, որ ոչ էշ կա, ոչ՝ լեշ: Էտ տղեն արթեն իմանում ա ըտրանց ասածնի, ասում ա.- Ով գիդի էտ լեշ իմ էշ կյողացել ա:

Ասում են.- Դա՛, ո՛չ էշ կա, ո՛չ՝ լեշ:

Պերում ա իրա իշի կինը պահակներից առնում, դե պայման են արել չէ՞ տրանք, ու քյնում են, արթեն իրա քեռուն թաղում ա:

Դետո Շահ Աբաս ասում ա.- Ի՞նչ անենք, ի՞նչ չանենք, որ էտ կյող քըքենք:

Դայտարարություն ա կյում, որ էտ կյողը ո՞վ ա, սերյոզնի տուս կյա՞ն ասի՞ ես եմ, ես տրան ոչինչ էլ չեմ անի, ռոճիկ էլ կտամ, իմ պալատում կաշխատի, էլ կյողություն չանի:

Էտ տղեն սերյոզնի քյնում ա ասում ա.- Կյողը ես եմ, քու խազինեն ես եմ էսքան ժամանակ կտրել, կարասը իմ քեռին էր ընգել, ես եմ կյոլիս կտրել, լեշ ես եմ տարել:

Մի խոսքով պոլորը հանձն ա առնում: Որ հանձն ա առնըմ, էն ժամանակ, որ էտ կյողութիւնը ըլել ա, իրան հարևան թաքավորը միշտ նախատել ա Շահ Աբազին, թե.- Մի կյողը ի՞նչ ա, որ տու կարըմ չես փոնես:

Էտ թաքավորը ասըմ ա.- Միշտ էտ հարևան թաքավորը նախատել ա, որ՝ կարըմ չես մի կյող փոնես, հըմի ի՞նչ անես:

Էտ կյող ասըմ ա.- Ուզըմ ե՞ս էտ թաքավորին էլ կյողանամ պիտե՞մ ըստի:

Դե, իհարկե, թաքավոր խոստանըմ ա նրան պաշտոն, մեծ գանձ տա, որ էտ թաքավորին կյողանա բերի:

Էտ տղեն անց ա կենըմ էտ հարևան թաքավորի հողը, կամաց քյնըմ ա պալատ ըրթըմ, իրան համար մի ոչխարի ճորթի ճարում, ամեն մազից մի պոժոժ կախ անում, շինում ա զարգանդ ու իրիգուն միջոց ա ստեղծում, մտնում ա էտ թաքավորի պալատ՝ մուք ժամանակ: Եփոր պալատը քնում են, խաղաղվում ա, նա կիշեր ժամանակ վեր ա կենում մըտնում թաքավորի սենյակ ու իրան թափ տալի՝ չըխչըխկում ա, թաքավոր աչքեր պաշտում ա, որ պաշտում ա, տենում ա մի զարգանդ պաշտ, ասում ա.- Էտ ո՞վ ես:

Ասում ա.- Ես Կափոլի հրեշտակն եմ, եկել եմ, որ քու հոքին առնեմ:

Թաքավորը շատ խնթրում ա, ասում ա.- Իմ հոքին առնիլ մի մինչև առավոտ, ես կտակ ունիմ, ասե՛մ նոր իմ հոքին առ: Էտ կյողն էլ ասում ա.- Ես քեզ չեմ հավատում, արի ըստի մտի յաշկի միջին, առավոտ նոր քու հոքին կառնեմ:

Թաքավորին տընըմ ա յաշկի միջին ու փակում, ասում ա.- Որտեղ կասե՛մ, փսի-փսի կասե՛մ, կասե՛ս՝ միա՞ր՝ կատվի մման, որտեղ կասե՛մ՝ կուչի-կուչի, հա՞ֆ կանես՝ չան մման:

Եփոր թաքավորին արթեն ըստիան կյողանում ա, էտ քաղաքից պիտում ա, հանգստանալու ժամանակ ուրիշներ հըրցնում են.- Էտ ի՞նչ ա քու յաշկի միջին:

Ասում ա.- Մի շուն, մի կատու:

Եփոր հարց ա տալի կուճու-կուճու ա անում, նա հա՞ֆ ա անում, փիսի-փիսի ա անում, մյառ ա անում: Եվ էտպեսով պերում ա հըսցնում Շահ Աբասի պալատ: Եվ յաշիկ պաշ ա անում, էտ թաքավորին տանում Շահ Աբասին տալիս, ասում ա.- Այ քու ասած թաքավորին էլ կյողացա պիտի:

Ասըմ ա.- Տեհա՞ր՝ իմ կյողը ինչ կյող ա, տու ինձ նախատիր, իմ կյողը ընենց կյող ա, որ քեզ էլ կյողացավ պիտե՞ք քու երգից:

Պերում են երկու թաքավորն էլ տրան ռոճիկ են նշանակում ու ասում են.- Էլ կյողութուն չանես, ստացիր քու ռոճիկ ու ըտենց էլ ապրի:

Սուլա Մասրադինը¹ ամեն քշեր ման կյանքիս և ընել, որ տենա իրանից ինչ և ասըմ ժողովուրթը: Ով որ լավ և ասըմ, ոսկի և տալի ճանփու տնըմ, ով որ վաղն և ասըմ, կախ և անըմ: Տա մի ըրուզու տենըմ ա, որ քուլիցը տու՛ւս լիս և ըրնըմ, կյանքիս և իրան վազիրին ասըմ ա, որ.- Զյնտցեք տեհեք ընդի ի՛նչ կա, լիս կա ընդի: Իրեք ախճիկ կա ընդի, կքյնոք են իրեք ախճիկն էլ կպիրեք:

Յյնըմ են վազրոնի տենըմ, որ իրեք ախճիկ նստած չուլքի են անըմ:

Ասըմ ա.- Սուլա Մասրադինը (Շահ Աբասը) ծեր իրեքիտ էլ կանչել ա:

Էտ մեծ քիրն ասըմ ա.- Մենք անբախտ ախճեք ենք, չուլքի ենք անըմ մեզ պահըմ, մեզ ո՛ւր և կանչըմ Շահ Աբբազը:

Թե.- Դե գիղըմ չեմ, վե կցեք քյնտնը:

Վեր են կենըմ էտ իրեք ըխճկանն էլ պիրըմ, պիրըմ են Շահ Աբբազի կուշոք:

Ասըմ ա.- Շահ Աբբազ, սաղօլ սըն, մեզ ո՛ւր ես կանչել:

Թե.- Կանչել եմ, ի՛նչ ես ուզըմ, ասա, ես քե տամ:

Ասըմ ա.- Ես ուզըմ եմ Շահ Աբբազի առաչի կնիկը ըլնեմ:

Վիրի հարգի պըլանիքը տալիս և տրան, ասըմ ա.- Զյնտ:

Էն միչնակին ասըմ ա.- Բա տու ի՛նչ ես պահանջըմ:

Թե.- Ես էլ ուզըմ եմ երգորոթն ըլնեմ:

Տրան էլ և ընթուրում: Էն գլլիզ պուռուրին ասըմ ա: Ծըծարըմ ա, ասըմ ա.- Բա գիղըմ չե՛ս ես՝ ի՛նչ եմ ուզըմ:

Թե.- Ի՛նչ ես ուզըմ:

- Ես, հա՛ ետ պուռուր ախչիկն ասըմ ա, ես ուզըմ եմ էն բախտին տիրանամ, որ Շահ Աբբազը իմ շորերը վեր ունի ինձ բաղնիք տանի:

Հա՛: Էտ և Էտ Շահ Աբբազը կարքաղըմ և վազիրին, որ.- Զյնտցեք մի խամ քուռակ պիրեք, մազերը կապցեք նրա պոչիցը, խոիկ տվեք:

Զյնըմ են մի խամ քուռակ են պիրըմ, էտ ըխճըկանը լավ հյուսեր և ըլնըմ, էտ հյուսերը պոչիցը կապըմ, ճիպտոր տալիս են, տա քաշ տալով՝ տանըմ ա: Շատ և տանըմ, քիչ և տանըմ, տանըմ և Շահ Աբբազի ֆորսատեղը վեր և ընգնըմ էտ ախչիկը: Շորերը-պանըմ դիվ քրքըրըմ ա: Ֆորսատեղը որ վեր և ընգնըմ հա՛, էտ ախճիկը հա նեղացած տափը քանդիլիս և ըլնըմ, մտիկ և անըմ տենըմ, որ տափիցը մի պուլիկ պոչը ըլավ, էտ պուլիկ ըռեխը ետ և քաշըմ տենըմ՝ ոսկին լիզը: Իրան էն լանթերիցը մի կտոր հանըմ ա, սեե մի պուռը վեր ունըմ մեչ ածըմ, կապըմ ու էն պուլիկը ըլետ ծածկըմ, նշան անըմ: Մտիկ անըմ տենըմ, որ մի չուլախ մարթ, մի էշ ըղաքին, կաղին տալով՝ կյանքիս ա:

Ասըմ ա.- Պապի ջան, արի ըստի, պոն եմ ասըմ:

Կյանքիս ա: Ասըմ ա.- Ի՛նչ և, բալա ջան:

Ասըմ ա.- Բեզ խնթըրըմ եմ ինձ տանես ծեր տուն, ինձ ծեր տանը պահես, ես քե օգուտ կտամ:

Ասըմ ա.- Ախչիկ ջան, օխտն ախչիկ ունեմ տանըմ, չուլախ, անպան, ախքատ ճըրի իրեսին քյնըմ ենք, քե ո՛նց տանեմ:

Թե.- Իր ինձ տանես, պապի՛, ինձանից օգուտ կունենաս:

Թե.- Դե հիլ և քյնոմ ախչկերանցս ասեմ, տենամ ի՛նչ եմ ասըմ:

Զյնըմ ա, տա հանըմ և էտ պառավ հային փող և տալի, ասըմ ա.- Տար հացից-պոնից առ, տա՛ր:

Զյնըմ և ըխճըկերանցը որ ասըմ ա, հա ըխճըկեքը ասըմ են, թե.- Այ հերա, անխելք չես, պոն չկա, օխտը չըլնեմ² ութն ըլնեք, քյնա պի, պոն չկա, քյնա:

Էտ մարթը ուրախ-ուրախ կյանքիս և, ասըմ ա.- Բալա ջան, արի, ես քե կտանեմ:

Էտ ախչիկն էլ նրան պահ տված և ըլնըմ.- Թե որ կյանք ինձ տանես, խուրջին կպիրես, մեշոկ կպիրես, քյնալ դեմ առըտուր անեմ, որ վեր ունեմ քյնտնը:

¹ Բանաստեղծ Շահ Աբաս ասելու փոխարեն սխալմամբ ասում է Սուլա Մասրադին (Նասրեդին) և հետո սխալն ուղղում է (ծանոթ բանահավաքի):

² Պատումի այս մասում հիվանդ բանաստեղծ զանգատվում է գլխացավից. «Է, կըլիս ցավը փոնց», բայց հետոսաբար շարունակում է պատմել (ծանոթ. բանահավաքի):

Քյնըմ ա տհանց հմար ուտելիք-պմն առնըմ, բոլ կտոր առնըմ էտ ըխճկերանց հմար, էտ պասլը էշին նստըցնըմ ա տանըմ տուն: Սաղ ջանը յարա ա, էնքան քարին-բոլին դիբել ա, էտ ա տանըմ ա տուն: էտ ախչիկը՝ էն մնծ ախչիկը, կարող-ծնող ա ըլըմ, կարըմ ա: Իրանց հմար շորեր ա կարըմ, հաքըմ են, ուրխանըմ են, ասըմ են.- էս բախտը էս որ-դիա՞ն էր:

Փորերնին էլ կշտանըմ ա: Հետո մի քանի օրից հետո հորը փող ա տալի, որ.- Քար կրի պի, քե հմար տներ շինի, էս ի՞նչ ա, որ սըրանցըմ էս ապրըմ:

Պիրըմ ա տհանց հմար լավ էրկու հարգանի տներ-պմն շինըմ, մի էլ էտ մարթին ասըմ ա թե.- Այ հերա, տար էն փլան տեղը քար վեր ածա:

Տանըմ ա ընդի քար վեր ածըմ, հենց տուն շինիլ ա տալի, էն պուլիկը մնըմ ա միջին: Երկու հարգանի տուն ա շինըմ, լավ բաղ ա քցըմ, պմն ա քցըմ, էս ախչիկը քյնըմ ա¹, քյնըմ ա ըստ:

Օրերի մի օրը, տարիներ ա անց կենըմ, ինչ ա անց կենըմ, էս Շահ Աբբազին կյալիս են ա-սըմ, որ.- Շահ Աբբազ, սաղոլ սըմ, քու որսա-տեղը հրե լավ բաղ կա, տներ կա:

Սա ախկատի շորըմ ա միշտ ման կյալի, ախկատի շոր ա հաքըմ, քյնըմ տենըմ: էտ ախճիկը վիրկից տենըմ ա, ճմանչըմ ա, որ տա Շահ Աբբազին ա, իրան ծառաներին ասըմ ա, որ.- էն մարթը, որ կյա տուրը թակի, ասի. «Հիլ արեք կյա՞մ», հիլ արեք կյա:

Քյնըմ են տենըմ են էտ Շահ Աբբազը եկավ տուրը թակեց, քյնըմ են էտ ծառաննին, ասըմ ա.- Քչերս թույլ տվեք, դարիք մարթ են ըստե-ղեք:

Ասըմ ա.- Արի՛.- Տանըմ ա: էտ կնիկը քոծե-րին պահ տալի.- Է՛վ հաց շինեցեք, ուտըց-րեք, խմըցրեք, հիլ արեք ուտի, ու էս քչերս համամ դեմ քյնալ, ծեգ կանչիլ դեմ, կանչիլ դեմ, հե՛յ չի անեք: Հիլ կանեք մա վեր կենա:

էտ ա, ախճիկ ջան, վեր ա կենըմ քչերը տա համամ քյնըմ, կանչըմ ա, կանչըմ՝ զարթնըմ

չեն, գիղըմ են էլի, պահ տված ա: էն Շահ Աբբազն ասըմ ա, թե.- Խանըմ ջան, խանըմ, հիլ-լա էս տանեմ էլի:

Ասըմ ա.- Հա՛, արի՛ տար, արի դե տար, էս անիծվածին զարթնըմ չեն:

Վեր ա կենըմ տրա վեդրեն վեր ունըմ, հա-մամ տանըմ: Վեր ա կենըմ էտ ա Շահ Աբբազը, վեդրեն վեր ա ունըմ քյնըմ բաղնիք, բաղ-նիքից տյուս ա կյալի, կյալի տուն: Ըստի հա վերջը լիսանըմ ա, էտ Շահ Աբբազին հաց են տալի, ուտըցնըմ-խմըցնըմ ճամփու տնըմ:

78(78). ԱՍՏԾՈՒ ԿՅՐԱԾԸ ԵԸԼՁԻԼ ՉԻ ԸԼԻ

Հին ժամանակ, ասըմ են, ըլել ա մի Շահ թաքավոր, կացի էտ թաքավորի անըմ միտս քցեմ: էտ թաքավորը, որ ման կյալիս ա ըլել, իրեն հետ մի օքնական ա տարել, իրա վագի-րի հետ ման կյալ ա քյնացել: Ման կյալու ժա-մանակ մի երկու տարի աշխարքը պտտիլ դեն, որ իրեն ժողովրթի վիճակն իմանան: էտ որ քյնըմ ա, մի տան քչերը դոմաղ են ըլըմ, մի հարևանի կին ազատվիլիս ա ըլել, էտ վա-զիրն էլ գիտնական ա ըլել, ծըծաղել ա: էտ վագիրը որ ծըծաղըմ ա, էտ Շահ ու Շահբազը ասըմ ա.- Այ մարթ, տու ինչի՞ ծըծաղեցիր, կարող ա՞ իմ վրա ծըծաղեցիր:

Ասըմ ա.- Չէ՛:

Որ շատ ստիպըմ ա, ասըմ ա՝ ընչի՞ ծըծա-ղեցիր:

Ասըմ ա.- Ըստի մի աղքատ կնիկ տղա դի ունենալ, էտ տղեն էլ կյալ դի քեզ փեսա տառնալ:

Որ ասըմ ա. «կյալ դի քեզ փեսա տառնալ», ասըմ ա.- Հիլ դե՞մ անիլ, որ ինձ փեսա տառնալ:

Որ մի քիչ պտտըմ ա, կյալիս ա, էտ կնիկը ազատվել ա արդեն: Թաքավորը կյալիս ա տրամ մի կից ոսկի ա տալիս, դե թաքավոր մարթ ա էլի՞, ոսկի չունի՞ ու էտ ըրեխին վեր ա ունըմ:

էտ կնիկն էլ ասըմ ա.- Ի՞նչ դեմ անիլ էտ ը-րեխին:

¹ Բանասացը դարձյալ զանգատվում է առողջու-թյունից. «էս անդեր աջքս էլ ա խարաք» (ծանրոք բանահավաքի):

Յա՛ էտ ըրեխեն վերցնըմ ա վազիրին տալիս, ասըմ ա.- Կտանես էս ինչ անտառընը վեր կքցես, թող անասուննին ուտեն:

Որ տոն տալիս ա, էտ վազիրն էլ տանըմ ա մի ծառի տակին վեր ա տընըմ ու ընքելանը բրախըմ կալի: Էտ ըրեխեն մնըմ ա ըստի, լաց ըլըմ, ժընգժընգըմ ա: Էտ ժամանակ մի վայրենի այծ կալիս ա ըստեղ կռանըմ ա սիե էտ ըրեխի վրա, ծիծ տալիս: Էտ էծ կուրծքն ա տալի միառժամանակ, տրա համար են ասըմ՝ աստ-ծու կյոռ կել չի ուտի: Միառժամանակ ըստեղ մի չորբան տենըմ ա մի շուն վազ ա տալի ծառի տակ, էլի ետ կալի չորբանի կուշտ: Էտ մարդ՝ էտ չորբան, եղևից քյնըմ ա, ասըմ ա.- Զյնամ տենամ էս շուն որդի՞ ա կաղընըմ:

Քյնըմ ա տենըմ՝ էտ ծառի տակին մի պտուր փաթած, էտ ըրեխին վերցնըմ ա պիրըմ, ասըմ ա.- Աստված ինձ էրեխա չի տվել, տանենմ:

Վերցնըմ ա չորբան պիրըմ ա սկսըմ ա պահել: Սկսըմ ա, էտ ըրեխին պահըմ ա, ըրեխեն մեծանըմ ա՝ դպրոց տալի, սվորցնըմ ա:

Օրերից մի օր էտ թաքավորը ըստեղով անց կենալիս տեղը, էլի էտ վազիրը ծըծաղըմ ա:

Ասըմ ա.- Վազիր, էտ ընչի՞ ծըծաղեցիր:

Ասըմ ա.- Ըստեղ մի տղա կա՝ չորբանի տղեն ա, մեծանալ դի, կալլ քեզ փեսա տառնալ:

Ասըմ ա.- Էտ ի՞նչ պան ա, բա էն մնիցը պրծանը:

Քյնըմ ա էտ չորբանին փող ա տալի, ըրեխին վերցնըմ ա պիրըմ: Էտ ըրեխեն տասնհինգ տարեկան տղա ա էլի: Վերցնըմ ա տանըմ վազիրին տալիս, ասըմ ա.- Կտանես այսինչ տեղը կնորթես, արինը շորերը թաթախ կանես կպիրես:

Էտ վազիրը էտ տղեն վերցնըմ ա տանըմ, դիմիշ չի անըմ մորթի, մի ծիտ ա փռնըմ, էտ ծիտ մորթըմ, էտ տղին տկտրացնըմ, շորերը առնոտըմ: Էտ տղին ասըմ ա.- Այ տղա, քյնա քեզ համար ապրի:

Էտ տղեն ըստենց տկտր քյնըմ ա ընգնըմ մի քաղաք: Վազիրն էլ շորերը պիրըմ ա տալի թաքավորին: Էտ ըրեխեն քյնըմ ա մի քաղաք ընգնըմ, քյնըմ ա մի պառավի հանդիպըմ, ասըմ ա.- Մայրիկ ջան, ինձ հինից-նորից հա-

գուստ տուր հաքնեմ, ըստի քեզ երեխա տառնում:

Էտ ա տիե որ ասըմ ա, պառավը շոր ա տալի, պահըմ ա: Դե մեծ ըրեխա ա արթեն, խելքի ա եկել, ասըմ ա.- Մի՛նչ ե՞՞փ սիե կենամ, քյնամ ըստիեք մի տեղ աշխատեն:

Որ տոն քյնըմ ա, մի հարուստ վաճառակա-նի տան ծառայըմ ա: Էտ խազեյինը տանըմ ա տղին մագազինըմ տնըմ, թե.- Առնտուր արա՛:

Տրամ էլ իրան երեխա ա վերցնըմ: Մի քանի ժամանակ ըստեղ աշխատելուց եղո ո՞նց ա ըլըմ, թաքավորը կալիս ա, էտ խանութի կող-քից անց կենալիս էտ վազիրը նորից ծըծաղըմ ա:

Թաքավորն ասըմ ա.- Էտ ընչի՞ ես ծըծաղըմ:

Թե.- Էն ջահել, սիրուն տղին տենըմ ե՞ս, որ պան ա ծախըմ, քեզ փեսա դի տառնալ:

Թե ասըմ ա.- Էտ ի՞նչ ես ասըմ, - ասըմ ա,- Էն ախքատ կյնգամիցը ըրեխեն առանք ուռը արինք, բա սա ի՞նչ անեմ: Սա ոչ առնական ա, ոչ պան, սրա հերը մեզամից հարուստ ա:

Վազիրը ասըմ ա.- Թող քեզ փեսա տառնալ էլի՛:

Թաքավորն ասըմ ա.- Լավ, ես էս տղին մի գորություն կտամ, կդարգեմ մեր տուն: Կկյը-րենմ, որ ինչ հաղաղ էս տղեն մեր տուն կհաս-նի, մամենտալնի վիզը կթըցնեք:

Էն ա մի նամակ ա կյրըմ, էտ ըրեխին կար-քաղըմ ա, որ.- Պետք ա տանես թաքավորի պալատ՝ այսինչին հանձնես:

Էտ ըրեխեն էտ նամակ վերցնըմ ա ու ճամ-փա ընգնըմ: Չնայած գրագետ տղա յա, բայց փակետ պա՞ց անիլ անհարմար պան ա, տը-նըմ ա իրա գլխարկի միջին, քյնըմ ա էտ թա-քավորի քաղաքը տուս կալի: Որ թաքավորի քաղաքն ա տուս կալի, քշերն ա ըլըմ, քյնըմ ա թաքավորի պալատի առաջը մեծ սաղ ա ը-լըմ, ընդեղ պատկըմ ա ու քնըմ ա: Ըռավոտը թաքավորի ախչիկը իրա մաժիշտների հետ ման ա կալիս, գրոսնըմ ա , կալիս ա տենըմ՝ ըստեղ մի տղա քնած: Թաքավորի ախչկա սիր-տը կալըմ ա, սիրահարվըմ ա: Մտիկ ա անըմ տրա՝ բոյ-բուսաթին, իրեսին, տենըմ ա՝ իրես գլխարկի միջին մի նամակ: Նամակը վեր ա ունըմ տանըմ ա կարթըմ ա, տեսնըմ ա, որ ի-

րան հոր կյրած նամակն ա, ասըն ա. «ինչ թոպե որ հասնի, կոչնչացնեք»: Նա էլ էտ նամակը տանըն ա մի ուրիշ թղթի վրա կյրըն ա. «էս տղեն ինչ թոպե որ կհասնի, իմ ախչկա հետ կամուսնացնեք», տընը ա փակետի միջին, պիրըն էտ տղի գլխարկըն տընը: Էտ էն ա, որ տընը ա, էտ տղեն զարթընըն ա, քյընըն ա էտ նամակը տալի թաքավորի տեղակալին: Էտ տեղակալը վերցընըն ա էտ նամակը տանըն թաքուհուն տալի, թե սիե-սիե մի տղա ա դրգել: Կնիկն էլ էտ տղին տենըն ա, հավանըն ա, ասըն ա.- Դե ոնց որ կյրեղ ա, պետք ա նիենց էլ անենը:

Էտ ա, որ տիե պիրըն են էտ ախչկան ու էտ տղին ամուսնացնըն են: Իսկ էտ թաքավոր, թե երփ կկա, հայտնի չի: Եղով էտ թաքավորը մի երկու-իրեք տարի եղը դի կալ: Էտ ախչիկ կալիս ա մի հատ ըրեխա ունենըն: Երկրորդ տարին արթեն մեկն էլ ա ունենըն: Էտ ա խաբաթը կալիս ա, թե արթեն թաքավորը կալիս ա: Յմի պետք ա քյանոն դիմավորելու: Յմի էտ ախչկա փորի ցավ ա փռնըն, դե իրա կատարած պոնենըն ա: Պիրըն ա պատվիրըն ա՝ մի ծի ծամքեն ու մեծ տղին, արթեն իրեք տարեկան ըրեխա ա էլի, վրեն նստցընըն ա, ու քյընըն են դիմավորեն: Ըսի վապիրը էլի ծծաղըն ա:

Թաքավորն ասըն ա.- Էտ խի՞ են ծծաղըն:

Թե.- Քու թողը հրես եկել ա քեզ դիմավորըն ա:

Թե.- Ո՞նց թե:

- Բա էն տղի ըրեխեն ա էլի:

Ասըն ա.- Չէ՞, ես տրան ռադ դեն անիլ:

Թե.- Ո՞նց դես ռադ անիլ:

Էտ ա կալիս են տուն, դե երկու թող ունի էլի: Շատ ա մտածըն, բայց դե ի՞նչ դի անիլ, էն ա աստուռ իրեք կյրածը ճընջիլ չի ըլի:

Էն ա իրանց մուրազին են հասնըն:

79(79). ԱՇԽԱՐ Ա, ՈՆՏ ԲԸՈՆԸՑՆԵՍ, ԸՏԵՆՑ ԷԼ ԿԳՆԱ՝

Լինըն ա մի հատ թաքավոր, էտ թաքավորը բոլորովին ոչ մի տեսակի արդյունքներից չի օգտվըն, միակ ու միակ նա, արդյունքըն էն ա լինըն, որ իրա տերիտորիան՝ ամբողջը, նա միշտ հասարակ շորով, որ չճանաչեն, միշտ հսկելիս ա եղել, թե քաղաքումը ինչ ա պակաս, ինչ ա ավել, որ ըստ այնըն նա կարողանա, նա էտ բոլոր միջոցները ձեռք առնի և ժողովրդի կյանքը լավ բավարարի:

Սի անգամ տա հասարակ շորով իր քաղաքում ման ա գալիս, վրդուգ մտըն ա մի հատ խանութ ու խանութի բոլոր պուկաների վրա նայում ա, թե ինչ ա պակաս, որ նորից բաց թողի էտ պակասորթները, որ ժողովուրթը ավելի ապահով ապրեն: Էտ մոմենտին ներս ա մտընըն մի երիտասարդ տղա ու հարցընը.- Խանութպան պապիկ, մի հատ պաչկի մեչ չորս տեսակի քաղցրեղեն-բան ածա, ինձ շատ պետք ա:

Ասըն ա.- Բալիկ ջան, ի՞նչ ածեն:

Ասըն ա.- Փըստա բաղա, հնդի խուրմա, քիշմիշ, լաբլաբու:

Էտ չորս տեսակի ուտելիքը մի պաչկի մեչ ածըն ա և տալի տղային: Տղան, իրա ինչ որ արծի, փողը վճարըն ա և դուրս գալու ժամանակ նայըն ա տեսնըն՝ մի ծերունի բակումը կաղնած ինչ-որ տա փայ ա հավաքըն: Սի հատ վերցընըն ա ուտըն ինքը ու ասըն ա.- Պապիկ ջան, չնայած առել եմ, բայց ես կյանքում ոչ-որ չունեն հարազատ, տանեն ո՞ւմ տամ, ավելի լավ ա քեզ տամ, տուր քու թոռնիկներին, քու բալիկներին տուր:

Իհարգե, պապիկը շատ գոհ ա լինըն և շնորհակալություն ա հայտնըն տրան ու նորից ինչ-որ մի բան տա մտածըն ա. «Վար, չէ՞ որ ես պետք ա ծխախոտ էլ ի վերցրել»:

Գալիս ա նորից ասում.- Պապիկ ջան, խնքըն եմ, մի հատ էլ ծխախոտ տուր ինձ:

¹ Չեքիաթի վերնագրի մասին բանասացն ասաց. «Վեռնագի՞րը, էտ բոլոր բովանդակությունը կախված ա, որ ինչպես մարթիք, ինչ գործ էլ ուզըն են բռնեն, միշտ ասըն են՝ ա՛՝ աշխարհ ա, ոնց բռնընցես, ըտենց էլ կզնա» (ծանոթ. բանաստեղծություն):

Իսկ ետ թաքավորը ետ մոճեմտին ըտեղ ման ա գալիս, բայց ոչ-ոք չի ճանաչեց, իհարկե: Տա՛ ետ կարտի նման, ինքեան որ կարտի երկարությունն ու լայնությունն ա, գրած, իրան ծոցընդ տըրած մի քանի հատ վրին գրած ա. «Աշխարհ ա, ոնց որ բըռնցնես, ըտենց էլ կգնա»: Մի հատ գցըմ ա տա՛, բայց տղեն չի նկատըմ, որ քցած ա, ու ինքը դուրս ա գալի գնըմ: Տղան որ շուռ ա գալի, որ դուրս գա մագազինիցը (եւ խանութիցը), իհարկե, տեսնըմ ա՝ մի հատ ինչ-որ բրոնզի տառերով մի հատ թուղթ ա ընկած, վերցնըմ ա և կարողըմ, ասըմ ա, տակին էլ գրած ա՝ Շահ օղլի Շահ Աբաս թաքավորի պողպան, իհարկե: Սրա միտքը շա՛տ բան ա, մեծ ա երևըմ, բայց բովանդակությունը՝ գրվածքը, շատ կարճ ա: Վերջը տանըմ ա եւ տղեն ետ քաղաքըմ ինչ-քան գիղմական մարթիք կան, բոլորին էլ հետաքերըմ ա, որ սա ի՞նչ ա էստեղ գրված, որ ես թաքավորի անունեն էլ ըստեղ պողպանը կա: Բոլորն էլ ծփծաղըմ են տրա՛ վրա, ասըմ են.՝ Այ մարթ, հա դե պան ա էլի, տու՛ էլ պանի երկից ես ընգեյ, ընգած թուղթ ա ըլե՛, վեր ես կալեյ, տրամով հետաքերըմ ե՛ս:

Ես տղեն ետ քաղաքըմ ապրըմ ա, իհարկե, ետ թաքավորի, իսկական իրա ետ մեծ քաղաքըմ ու ոչ-ոք չունի, կյանքըմ միակ ինքն ա, որ կա: Ոչ մի տեսակ հարազատություն չունի, եթեմ տղա ա էլի, ըտենց մեծացել ա ու բանվորություն ա անըմ, օրական աշխատըմ, գալիս: Մի հատ էլ փոքրը սենյակ ունի, մի ութը համարանոց լամպա, իհարկե, որ իրիզները կըռցնըմ ա, մի հատ էլ պուճուր փարչ ա, որ ըրիզները բերըմ ա դնում, որ գիշերը հանկարծ չծարավի ու ետպես էլ խղճուկ ապրըմ ա էտեղ: Բանվորություն ա անըմ, էտպես էլ ապրըմ:

Մի գիշեր ետ, իհարկե, ետ գթած թուխթը, որ պատմեցի, միշտ տա իրա գըլխի տակին ա պահըմ: Գիշերը մի ժամանակ, որ նա արթնանըմ ա, նորից նայըմ ա, նայըմ, կարթըմ ա ու ասըմ ա.՝ Դե որ աշխարհ ա, էտպես էլ պետք է լինի, ոնց բըռնցնես՝ կըգնա, ես պետք ա գնամ մեր թաքավորի հողը՝ գրանիցը, դուրս գամ, գնամ այսինչ թաքավորի հողը մտնեմ և առաջարկեմ, որ ես էկել եմ, այ-

սինչ թաքավորի տղեն եմ, եկել եմ քու ախչիկն ուզելու: Մի տենամ՝ սրա վերջավորությունը ի՞նչ դուս կգա:

Ու էտպես էլ ընկերներին ասըմ ա, որ.՝ Ես վաղը, մյուս օրը կբացակայեմ մի քանի օրով, իհարկե, հանկարծ ինձ համար չմտածեք, թե ի՞նչ եղավ, նախօրոք զգուշացնըմ եմ, որ ինձ համար չմտածեք:

Ու մի առավոտ էլ դուրս ա գալիս, դուռը փակըմ ու գնըմ: Երկար գնալուց հետո գալիս ա դուրս գալի, այսինքը՝ ետ սահմանը կտրըմ անցնըմ մի ուրիշ թաքավորի հողը ու գալիս ա մի ճաղացի մոտ, իհարկե, անծանոթ քաղաք ա, էտ ճաղացայանին խնթրըմ ա, որ.՝ Շատ խնթրըմ եմ՝ ծեր թաքավորի պալատները ինձ ցույց տաք:

Մի խղճով մարթ ա լինըմ ետ ճղացայանը, մի ահագին տեղ բարձրացնըմ ա մի բլուրի՝ բարձր տեղ ու ըտեղից ցույց ա տալիս ձեռքով, թե ասըմ ա.՝ Տեսնըմ ե՛ս էն մեծ երևույթ. ասըմ ա,՝ ետ մեծ շենքը մեր թաքավորի պալատն ա:

Նա շնորհակալություն ա անըմ, բան, վերջապես ինքը գալիս: Գալիս ա տեսնըմ, որ երկու հատ պահակներ կանգնած, զինված, տղան առաջին, որ մարթ իրավունք չունի դաժեմ հանց փողոցովը անցնելու, մոտովը: Տա՛ պրյամոյ գնըմ ա, որ գնըմ ա, հրացանները ցածրացնըմ են, սվինը, բանը բռնըմ տրա՛ վրա, թե.՝ Այ տղա, այ երիտասարդ, տու՛ իմանըմ ե՛ս ուր ես գնըմ, չէ՛ որ սա թաքավորի պալատն ա, իրավունք չկա ըստեղ գնալու: Դա՛, անքամ, եթե տու՛ պրոպուսկ է ունենաս, պետք ա իմանամ, թե ով ես տու՛, նոր պա՛ք թողանք:

Ես երիտասարդը ծրծաղըմ ա, ասըմ ա.՝ Այ ծեզ մարթիք, պահ իսկ տու՛ք իմանըմ ե՛ք, թե ում վրա եք էտպես հարցակըմ կամ հրացանները բռնըմ:

Թե.՝ Ով ուզըմ ա ըլի:

՝ Բայց հետո կիմանաք, թե ես ով եմ, թույլ տվե՛ք ես գնամ, թաքավորի մոտ գործ ունեմ:

Գործը որ մեծանըմ ա ըտեղ, իհարկե, ետ պահակներից մեկը ասըմ ա.՝ Տու՛ տրա՛ն պահի, ես մի գնամ թաքավորի մոտ:

Գալիս ա ասըմ.- Թաքավորն ապրած կե-
նա, մի ջախել երիտասարդ ա եկել, նախալնի
ուզըմ ա, որ ծեզ մոտ գա, ի՞նչ անենք:

Թե ասըմ ա.- Թույլ տվեք, թող գա:

Տղան վեր ա կենըմ, թույլ են տալիս, ար-
դեն տղեն գնըմ ա, մարդիկ կան՝ ոճանք որ
գործ են անըմ թաքավորի մոտ, իհարկե, հին
ժամանակը ծնկաչոք գնացել են մոտը, նոր
թաքավորը ձեռքը բարձրացնըմ ա, որ իբր թե՝
կանգնեցեք, որ ինչ-որ առաջարկ ունեք, ասե-
ցեք, ես մերժելուն՝ կմերժեմ, հարգելուն՝
կհարգեմ: Տա՛ ո՛չ ծնկաչոք, ո՛չ բան, էտպես էլ
գնըմ ա թաքավորին բարև տալի ու ասըմ ա.-
Թաքավորն ապրած կենա, եթե ցանգանըմ եք
իմանաք՝ ես ով եմ, ես Շահ օղլի Շահաբազի
տղան եմ, լսելով, որ թեզ մի հատ լավ ախչիկ
ուճես, եկել եմ տեսնեմ, եթե, իհարկե, մեկըս
մյուսին մենք կհավանենք, նրանից հետո ըստ
այնմ կմտածենք, թե ինչպես կդասավորենք
մեր գործը: Դա՛, հարսանիքի-բանի, նշանդո-
քի ամեն ինչն էլ, իհարկե, տա կկադարենք
մեր ծնողներով:

Ասըմ ա.- Տղա ջան, մտի: Բա տու ինչպե՞ս
ա եղել, որ էտպես եկել ես էտ շորերով, էտ
պոնով, չէ՞ որ տու թաքավորի տղա ես:

Ասըմ ա.- Զրմա էլ ասեմ, թե ինչպես ա եղել:
Տասներկու լավ ծիով, բանով,- ասըմ ա,- լավ
դոչի տղաներով ճանապարհվել ենք եկել, ճա-
նապարհին ձեզ մի... անուճը՝ Սուք քոլ են ա-
սըմ [այսինքն՝ անտառ], էտ անտառում բան-
տիտները հարձակվեցին, բոլորին էլ կոտորե-
ցին՝ ձիան-բան, ես մի կերպ փախել եմ գնա-
ցել մի գյուղացու տուն, խնդրել եմ, որ՝ ես թա-
քավորական զգեստը ծեզ մոտ մնա, մի հա-
սարակ շոր տվեք, ես քաղաք դուրս գամ,
գործ ունեմ:

Թաքավորը հավատըմ ա, ասըմ ա.- Ճիշտ
ա, էտպես էլ կլինի:- Զրամայըմ ա, ասըմ ա.-
տղային տարեք համամ, նրանից հետո,- ա-
սըմ ա:

Իհարկե, բաղնիքից հետո բերըմ են թաքա-
վորական լավ զգեստ հրեցնըմ, նոր ախչկանը
հանըմ են, ախչիկը որ տեսնըմ ա, ինքը գեղե-
ցիկ տղա, դե շորն էլ հաքել ա, ասըմ ա.- Կա-
չկա, ես տրան ուզըմ եմ:

Էտ ա, որ մեկը մյուսի հավանըմ են, ասըմ
ա, տղան ասըմ ա.- Դայրիկ,- ասըմ ա,- իհար-
կե, մինչև հիմա ես թեզ թաքավոր եմ ասել,
բայց իրմի իմ հայրիկն ես, հմի թույլ տուր ինձ
ես գնամ իմ հորս հետ ամեն ինչը պատմեմ,
գործողությունը, որ էտպես ա եղել, նոր ըստ
այնմ մենք կարողանանք մեր գործը շարու-
նակենք, հարսանքով-պանով, թե ինչպես
պետք է մենք ախչկանը տեղափոխենք մեր
աշխարհը:

Թաքավորը ծիծաղըմ ա, ասըմ ա.- Բալիկ
ջան, տու երիտասարդ ես, մտի տեղըտ, ես
ինչ որ պետք է, ես ինքս իմ ձեռքով կըկադա-
րեմ: Բա ես էնքան միջոց չունե՞մ, որ թեզ ըս-
տեղից հարսանքով ճանապարհեմ, մեկ էլ
գնաս ճանապարհին ի՞նչ կպատահի, ո՞նց կը-
լինի:

Դե էտ տղան էլ, իհարկե, հենց էտ մտքին
ա, ո՛ր ա գնալու: Մի յոթ օր տրանք նախա-
պատրաստվըմ են իջրսնքի, հետո յոթ օր էլ
հարսանիք են անում, յոթ օր էլ հանգիստ ա
տալիս, նոր նախապատրաստվըմ են ամեն
ինչով, գործով, լավ մվագներով: Դին ժամա-
նակ, իհարկե, ավտոմեքենաներ չի եղել, բայց
փայտոններ ա եղել, կարետներ [այսինքն՝
շուշաբանդով էլի՝ պատրաստի], հարս ու փե-
սեն էտ կարետայի մեջ են մտըմ, մնացած
հանդիսավորներն էլ, որը ծիով, որը փայտո-
ներով, մեծ ուրախությունով թաքավորը ճա-
նապարհ ա իր ախչկանը:

Շատ որ գալիս են, տեսնըմ ա, որ մի ինչ-որ
տղա շատ լավ էլ ծի ունի, մի լավ ծին էլ հա-
մարյա թե էնպես ա խաղացնըմ, որ չտեսն-
ված, ձեռքը կարտից հանըմ ա տղան, մա
խկույնեթ սանքը քաշըմ ա կայնում: Մի հատ
փոքր ռասպիսկա ա՛ գրըմ, թուրք Շահ օղլի
Շահաբազի վրա, որ աչկետ լույս քու տղան
այսինչ թաքավորի աղջիկը հավանել և մեծ
հանդեսով մեծ ուրախությունով շուտով մենք
քեզ կհանդիպենք:

Էս տղեն թուրքը վերցնըմ ա ու ծին քընըմ,
դե հին ժամանակը ասված էր էլի, որ, ուրեմը,
հարսանքները տեսնց մի բան կար, որ, ուրե-

¹ Ռասպիսկա (расписка) - ստացական, ստորա-
գրություն: Այս դեպքում բառն օգտագործվել է
գրություն իմաստով (ծանոթ. բանահավաքի):

մը, էտ շուտ գնացող ծիւնն ասըմ ին՝ աղվես
ա: Աղվեսը հըրոսնքի առաջին գնաց: Գալիս ա,
Շահողի Շահաբազի պահակներով կանգ-
նած, թույլ չեն տալիս, ասըմ են:

- Այ մարթ, թաքավորի տղեն մեծ ուրա-
խությունով, մեծ հարսանքով էս ինչ թաքա-
վորի աղջկանը բերըմ ա, թույլ տվեք ես գնամ
մի հատ աչքալույս անեն:

Պահակները փղստփղստցնըմ են իրար
մեջ, թե ասըմ ա.- Այ տղա, մեր թաքավորին
տղա չունի, իսկ ես տղեն, հարսը, պանը, էս
որդիա՞ն ստեղծվեցին:

Վերջը մեկը թույլ չի տալիս, մյուսը թուրքը
վերցնըմ ա գնըմ ա թաքավորի մոտ: Թաքա-
վորը կարթըմ ա, ասըմ ա.- Սա հարսանքի հա-
շիվ չի, կա-չկա էտ թաքավորը իրա գործովը
ներս ա խուժել իմ սահմանները, ու ինձ քնց-
նըմ են:

Բերըմ ա մի լավ, քսան տղա նորից ծիա-
վորվըմ են ու գնըմ՝ մի լուր բերելու համար՝
թաքավորին: Գալիս են տեսնըմ, այ մարթ,
ի՞նչ գործ, ի՞նչ պան, ճիշտ ա, գործը կա,
բայց թե ուրախություն ա, թե հարսանք ա,
թե ինչ ա, նվագի ծայն ու պան, թե ինչ
խաճաճ:

Գալիս են ասըմ.- Թաքավորն ապրած կե-
նա, հարսանք ա, որ կա:

Ախր չէ՞ որ թաքավորն ինքն ասել ա, որ.
«աշխար ա, ոնց փղռնցնես, էտպես էլ կգ-
նա», իրա լուզունգն ա տա: Յմի էլ ասըմ ա.- Դե
որ էտպես ա, աշխար ա, մի տեսնամ սրտ
հետևանքը ի՞նչ ա տառնըմ, ոնց փղռնցնեն,
հետեց էլ կքյնն:

Դրաման ա բաց թողնըմ, որ մեկ ժամվա
մեջ ամբողջ քաղաքը մաքրել, խալիները կա-
խել, հետո բուկետներով-բանով, բոլոր տեսա-
կի ընչերը՝ դայրաղները¹, դրոշակներով-բա-
նով քաղաքը՝ գեղեցիկ, էնպես լինի, որ ոչ մի
պակասություն չլինի:

Իհարկե, թաքավորի հրաման ա, էտ բոլորը
կադարըմ են, նրանից հետո ասըմ ա.- Ինչ որ
դասարներ կան՝ զան, լավաշ թխողներ, քա-
ղաքըմ ինչքան շնորքով մարդիք կան, բոլորը
ներկայանան թաքավորի պալատը: Էտ չայը

լավ դամով էփողները, ճաշը... պովերները,
վերջապես ինչ որ կան:

Էտ բոլորին էլ կանչըմ ա, լաքեյ-բան, որ ոչ
մի պակասություն էլ չըլնի: Էտքանից հետո
արթեն հարսանքը եկավ: Դռները բացըմ են,
էտ մոմենտին, չէ՞ որ հարսանքը գալիս ա,
տղատերը միշտ խառնվում ա ուրախությու-
նով, նա էնքան չի հետաքրքրվում՝ ով ա, ինչ-
պես ա: Վերջը հարսին, փեսային, էտ եկող էտ
երիտասարդներին մի առանձին տեղ են նըս-
տացնըմ, էն մեծամարդիքն էլ մի առանձին
տեղ են նստացնըմ, իհարկե:

Դիմա մեր էս թաքավորիցը խոսենք: Թա-
քավորին ինչ ա, որ մի շանջու էր բըռնել փո-
րին², ասըմ ա՝ մի իմանամ, թե էս դալմադայը,
էս գործը էս ի՞նչ տղա յա, որ էս բանը իմ գըլ-
խին ա տըրել: Գալիս ա մտնըմ որտեղ որ երի-
տասարդներն են նստած, երիտասարդները
դե մի քանի հատ են, մոտը մի քսան-քսան-
հինգ հատ երիտասարդներ են, բոլորի
կրծքին էլ բուկետներ-բան կա, տարբեր տե-
սակի բանտիկներ կա, հիմի չի ճանաչըմ, թե,
իրոք, սա, իսկական փեսեն ո՞րն ա: Շատ նա-
յիլուց հետո տեսնըմ ա, որ մեկի կրծքին մի
քիչ նշանները տարբեր են, ասըմ ա. «Կա չկա,
սո յա»

Ասըմ ա.- Բալիկ ջան, մի հատ դուրս արի:

Դիմա տա՞ գնըմ ա՝ տղան հետևիցը, տանըմ
ա մի առանձին սենյակ, որ իմանա, թե տա՞ ո՞վ
ա, որ էտ գործը էտ մարթի գլխին դըրել ա:

Ասըմ ա.- Բալիկ ջան, հիմի տու ինձ պատմի,
տու ո՞վ ես, ի՞նչ նախիլ ես և ինձ ասա՝ որ
պասպորտի, թաքավորի պասպորտի գրանց-
ված մարթ ես:

Ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, ես քու
քաղաքի մեջ ապրող մի երիտասարդ եմ,
կյանքըմ ոչ-ոչ չունեմ, միակ ես եմ: Ոչ մի տե-
սակի հարազատ, մեկ օր...

Ինչպես որ ես պատմեցի, իհարկե, որ եկել
ա խանութը, պան ա առել, էտ բոլորը լըռիվ
պատմըմ, կյանիս ա հասնըմ ընդեղ, որ արթեն
եկել ա մինչև ըտեղ դուրս ա եկել: Նախորդ
ես պատմեցի չէ՞, հասկանալի ա:

¹ Դայրաղ (հավանաբար պրսկ. *բեյրաղ*) - դրոշակ:

² Փորը շանջու բռնել - այսինքն ամոեղակություն-
նից անհամգիստ լինել:

Ասըմ ա.- Բալիկ ջան, գնա տեղը՝ տ - սուսուփուս մըստի, հա՛, սուս-փուս մըստի: Ոչ մի բան չի պատմես, իսկ տուս ինչպե՛ս եղավ, որ գնացիր էտքան գործողությունը տուս կատարեցիր:

Ասըմ ա.- Էտ մագազինընդ վրորուզ տուս կյալու ժամանակը ես փոքրը թուրքը գթել եմ:

Եվ պահելիս ա եղել իրա ծոցին, իհարկե, հանըմ ա, թաքավորին ցույց տալի: Ասըմ ա.- Դե ըստեղ գրած էր՝ երկիր ա, ոնց բըռնըցնես, ընենց էլ կգնա: Ես էլ ասեցի, դե որ տհենց ա, ես էլ ես գործը պետք է կադարեմ: Դե հիմա կատարել եմ, եկել եմ, եթե ես քու նկատմամբ, այսինքն՝ ես գործը վատ ա, կարող ես ինձ գլխատես:

Ասըմ ա.- Չէ՛, բալիկ ջան, վատ չի, գնա քու տեղը շատ հանգիստ մստի ու ոչ մի բան էլ չխոսես:

Նորից ա գալիս թաքավորը, արթեն իրա խիղճը հանգիստացավ, գալիս ա մի հատ հրաման էլ արձակըմ, որ ինչքան ծախս արված ա, մի կրկնակի՝ նորից էտքան էլ արեք: Վերջը արդեն սեղանները բացըմ են՝ երկու կողմի երկար սեղաններ, ես կողմի թաքավորի հանդիսավորներն էլ են հավաքված, էնտեղից՝ են մի թաքավորի արջկա կողմի եկողները՝ հանդիսավորներն էլ են ըստեղ, մստոտել են, հմի սպասըմ են, որ թաքավորը դուրս գա սեղանը օծի, մոր սկսեն հաց ուտեն: Թաքավորը, իրա զգեստը հաքին, թագը գլխին՝ թաքավորական, դուրս ա գալի, բոլորն էլ ծափահարըմ են, վերցնըմ ա արծաթե ոսկեջրած բաժակը, երկու սեղանի մոտ կաղնած, ու տեսնենք հիմա ի՞նչ ա ասըմ թաքավորը:

Ասըմ ա.- Հարգելի՛ իմ լավ ժողովուրթ, ես արթեն վացուն տարեկան եմ, հազիվ ու հազիվ իմ վիճակը այս տարիների ընթացքըմ շատ լավ ստեղծվեց, իմ տղան առանց ինձ հիշեցնելու, առանց իմ գիտության, ինքնագլխու գնաց այսինչ արջիկը հավանեց, հմի էլ մեծ հանդեսով, մեծ ուրախությունով, մեծ հըրսընթով եկավ, էնպես որ ես ես հասակում շատ ուրախացա, իհարկե, մինչև էսօր ես իմ ժողովրդիս պահել-պաշտպանել եմ, լավ, թե վատ, էտ դուք եք իմանըմ, բայց սօրից հետո, ես, իհարկե, մեծացել եմ, արթեն երկու կողմի

բարեկամների, երկու կողմի հանդիսավորների՝ հարսանքի, ես ուզըմ եմ ծեր ներկայությամբ իմ թաքավորությունը տամ իմ լավ տղային:

Թաքավորը մոր իմանըմ ա, որ, ուրեմը, էտ երիտասարդը էտքան խելացի ա եղել, ինքնագլխու էտքան մեծ գործ ա բռնել, ուրեմը, տա՛մ երկիր էլ կղեկավարի, և արծառի ա համարըմ ու իրա թաքավորությունը... գլխիցը թագը վերցնըմ և տղայի գլխին ա դնըմ, և արթեն էտ տղան, որ ինքը ոչ-ոք չուներ, մենակ էր աշխարըմ, էսօր նա եղավ թաքավոր և գահը ստացավ, և բոլորը ծափահարեցին և սկսեց իրա թաքավորությունը կառավարել:

Եվ տպես էլ թող նրանք իրանք իրանց մուրազին հասնեն, դուք էլ՝ ծեր մուրազին:

80(80). ՀԱՄ ԼԱԲԱԶԻ ԿՈՆԴ ՍԽԶԻԿԸ՝

Սի պառավ կնիկ, մի տղա էլ ուրուշ պա՛ն չունեն՝ մի գույզ եզը: Էտ թա՛զ տարվա մոտերքըմ, տարեմուտ եմ ասըմ, թա՛զ տարի եմ ասըմ, էտ տարեմուտը կյալիս ա, էտ մերը տղին ստիպըմ ա, ասըմ ա.- Այ տղա, էլ ասիլ չես, թե բա թա՛զ տարի ա կյալի, ես խալիը պղինձ դեն տնիլ, ճա՛շ դեն էփիլ, մենք պա՛ն չունենք, որթի՛:

Ասըմ ա.- Այ մերա, դե ի՞նչ անեմ, ունեմ ոչ, ունեմ ո՛չ, քյախիբ եմ, դե կա ոչ, կա ո՛չ:

Ասըմ ա.- Պի՛ եզան մինը մորթենք:

Ասըմ ա.- Այ մերա, բա որ կըրենամ ոչ, էքուց էլ կառնանացանը տուս կյալ, ո՞նց կըլի, ի՞նչ կըլի:

Թե ասըմ ա.- Կճարեմ էլի, չքէլ ընդո տառ երկու-իրեք ամիս կա, ապրիլին, մարտի վերջերին դես կառնանացանը սկսիլ:

Պիրըմ են մորթըմ՝ տարեմուտը կատարըմ: Կառնանացանը տուս ա կյալի, էտ տղեն կարըմ չի եզն առնի, մորը լծըմ ա եզան հետ, վար անըմ ա դաշտընը: Հա՛ի օղլի Հա՛ի Աբազը կյալիս ա տենըմ, ա՛յ տղա, մի անօրինական պա՛ն մի կնիկարմատ մի եզանը լծո՛ւմ՝ չուր ա վարըմ: Կյալիս ա տրա՛ տռանը վե կյալի:

- Մայրիկ ջան, դոնաղ չե՞ք ուզըմ:

Ասըմ ա.- Դո՞նաղն աստծո՞ւնն ա, բա խի՞ չենք ուզում:

Տրա կենսագրութիւնը, տրա որպիսութիւնը մտնում, որ սիւնն ա:

Թե ասըմ ա.- Լձ՛վ, որ տիւնն ա,- ասըմ ա,- ես կքնամ:

Վեր ա կենում էտ Շահ օղլի Շահ Աբազը դովրիշի ֆորմըմ քյնըմ իրան տուն՝ միլիցա դու անըմ, էտ տղին տանըմ: Տանըմ ա ինչ ա-նի, թակի, դատի տա, ինչ անի: Մի գիծ ցուլ ա ըլըմ էտ թաքավորին՝ էտ Շահ օղլի Շահ Աբազին, մի թուղթ ա կըրըմ նախրապահի վրա, որ էն բուղեն էլ մի գիծ պան ա, որ էն ա նա սպա-նի, որ ասեն բուղեն ճաղ արավ էլի, անօրի-նական պանը, մորը լծել ա՝ վար անըմ: Պի-րըմ ա նախրապահին տալի: Նախրապահն ա-սըմ ա.- Այ էն ա,- քյնա, կարըմ ե՞ս՝ տար:

Նա էլ մտած ա ըլըմ, կալիս ա հասնըմ, ուզըմ ա վեր կենա թե չէ՛, տա տալիս ա վեր քցըմ ու թուղ ճտըմ տընըմ, քաշըմ պիրըմ: Տանը պիրըմ ա կապըմ մի հինգ օր, վեց օր, խոտ չի տալի բուղին:

Ասըմ ա.- Թող կենա:

Մի օր մխելի խոտ չալակն ա տալի, ասըմ ա.- Տուս արի:

Եզանը լծըմ տանըմ դաշտերըմ վար անըմ ա, էտ ցուլը ման ածըմ ա, վար անըմ ա:

Ետ էտ Շահ օղլի Շահ Աբազը կալիս ա տենըմ, որ, այ տղա, էն ձգզգիլ բուղեն եզն ա շինել, լծած իրե վար անըմ ա:

- Պա՛,- նախրապահին որ ասըմ ա, ըրուզուրն ասըմ ա.- Ի՞նչ ասեց, ո՞նց արավ:

Թե.- էն ա սիւն տվուց վե քցեց, փոնցե, կա-պեց տարավ:

Թե ասըմ ա.- Շատ լավ:

Տրան էլ մի կոնդ ախչիկ ա ըլըմ՝ էտ Շահ օղլի Շահ Աբազին, թախտի ծերին մտցրած, ծառայողին պաղաձատ են անըմ ուտըմ ա, մտած ժած չի կալի: Որ կալիս ա տենըմ եզն ա շինել էտ ցուլին, ասըմ ա.- Սա իմ ըխչկանն էլ դի կնիկ շինիլ, տանն:

Տանըմ ա էտ կոնդ ախչիկը տալի տրան: Մի մեր են, մի տղա: Պիրըմ ա թախտի ծերին մտըցնըմ, ասըմ ա.- Այ մերա, որ ժած չկա, ժած չտա, պան չտնես, տեղիւն չանես, թող մտած կենա:

Որ ջանին հասնըմ ա, նա էլ գիղըմ ա, թե թաքավորի տանն ա, պիրիլ դեն, պաղաձատ դեն անիլ, ուտիլ դի՝ մտիլ: Որ ջանին հասնըմ ա, պաղաձատ ասըմ ա.- Եւքան հաք տամ մի կտոր, վե կաք ըստեղեք սրփի:

Յը՛, հը՛, ոտնավորըմ ա : Տուս ա կալի տուր սրփըմ, միէլ հաքը մըթիք էկլցնըմ ա, տնենն էլ ա տուս կալի: Մի հինգը, տասն օ-րիցը եղ էտ թաքավորը էտ կալիս ա, ասըմ ա.- Քնամ տենամ իմ ըխչկանն ի՞նչ արավ, պահըմ ա՞, սպանել ա՞, էս ի՞նչ արել ա:

Կալիս ա տենըմ, այ՛ տղա, մի հարսն ա տառել, ճղխավիլը քաշած տընենը-պանը սրփըմ, մաքըմ: Յէ հերը մտըմ ա թե չէ, քյնըմ ա մի խախալ լոթի պիրըմ դաքին տըմ:

- Յայրիկ ջան,- ասըմ ա,- էրվեն սիւնը,- ա-սըմ ա,- ով որ պան չի անըմ, հաք չեն տալի նրան,- ասըմ ա,- լոթին էլ ա հնդրի, բ՛վի քեզ հաք տան:

Լոթին տնըմ խախալով դաքին, հա՛ հնդ-րըմ:

81(81). ԹԱԶԱՎՈՐՆ ՈՒ ՏԱՆՓԻՆԸ՝

Թաքավորը դարվիշի ֆորմ ա մտնըմ՝ էտ մույն էտ Շահ օղլի Շահ Աբազը, քաղաքը ման ա կալի տենըմ, այ՛ տղա, քաղաքը չիմ խըվա-րած, մի տեղ լիս ա էրըմ: Պատվիւն, կալեն, կալեն՝ կալիս ա էտ լիւր, տենըմ ա՝ տառփին ա, պան ա անըմ:

- Այ մարթ, էս սաղ քաղաքը քնած, հանգս-տացած, էտ խի՞ ես տու պան անըմ էս չախիս, ի՞նչ ես անըմ:

- Դովիշ բաքա,- ասըմ ա,- եռեսուն կապեկ են անըմ,- ասըմ ա:

- Դե ի՞նչ ես անըմ, խի՞ ես քշերը ըխաղըմ:
- Քսան կապեկը պարտքն են տալի,- ասըմ ա,- տասը կապեկն էլ մարթ ու կնիկ յոլա ենք քյնըմ:

- Ինչի՞ պարտքն ես տալի:

Թե.- Երկու մեծահասակ ծնող ունեմ՝ մերս ու հերս: Քսան կապեկը նրանք են տալի, տա-սը կապեկն էլ հազիվ մենք մեզ պահըմ ենք, պաշտպանըմ:

Ասըմ ա.- Շատ էլ լավ կըլի, որ տհենց ա,-
ասըմ ա.- ըշխաղի:

Վեր ա կենըմ քյնըմ էտ թաքավորը, էտ
տարփինն ասըմ ա.- Սա էլավ ո՛չ, սրա կնիկը
կտանեն ես,- ասըմ ա:

Քյնըմ ա հրամայըմ, որ ամսի քանիսին.
«Կնիկըտ կպիրես»: Թաքավոր ա էլի, ի՞նչ դի
անիլ: Կյալիս ա մտածըմ, մուխար անըմ էտ
մարթը, դես-դեն:

Թե ասըմ ա.- Էս ի՞նչ պոն էր, ես ծնչն եմ
ընգել:

Կնիկն ասըմ ա.- Վախիլ մի՛, ո՛չ նա կտանի,
ո՛չ տոււ կքյնաս:

Ժամանակ ա տընըմ, որ ամսի քանիսին
կնիկըտ կպիրես: Տա էլ մնացել ա լքըպալա: Տե-
նըմ ա՝ դի եմ տալի:

- Վա՛շ, եկել եմ, կնիկ տանիլ դեն:

Թաքավորի վագրնին եկել եմ էտ ժամանա-
կի օրը տարփին կուշտը, որ.- Արի ըստի՛, ուս-
տա. մի դեսը կաղնի պոն ենք ասըմ:

- Էտ ի՞նչ ա, տղեք ջան, խեր ըլի,- գոռի
տըղտուղուլա:

Թե ասըմ ա.- Բա ասիլ չես թաքավորը մա-
հացել ա, եկել եմք, որ մեխ կտրես, տանենք
կուրոյի միար:

- Պա՛, ես ծեր եկած ճամփին մատաղ, էտ
ի՞նչ լավ պոն եք արել,- ասըմ ա.- բա ես
տըղտուղի, նա ինձ հրաման ա տվել, որ ամսի
քանիսին կյալ դեն կնիկըտ տանեն: Էտ ի՞նչ
լավ պոն արել ա:

Կյալիս ա զընդանը պոն անըմ, չաքուչը
ծեռն ունըմ:

- Մխամըզ մարա դոնդարա, աստոծ,- ասըմ
ա.- մխամըզ մարա դոնդարա, աստոծ,- ասըմ
ա.- իմ էս նեղ տեղիցն ազատի:

Լազաթին մեխը կտրըմ, յաշիկը լցնըմ ի-
րանց տալի, հա՛ անց կենըմ քյնըմ:

82(82). ՇԱՄԱԲԱՅԻ ՎԱՋԻՐԻ ՓՈՐՉԸ

Շահալու Շահաբազը և իրան վագիրը
գնըմ են իրանց գյուղերը, իրանց շրջանները
ման գալու: Գնըմ են, շատ են ման գալի, քիչ
են ման գալի, գնըմ են տենըմ՝ մի բիծա մարթ,
յոթ ճանապարհ արանքըմ երեք հատ հող մա-

ղած, էտ իրեք հատ հողը մաղըմ են: Եվ ասըմ
ա.- Պապաշա ջան, էտ հողը ի՞նչ ա:

Թե ասըմ ա.- Դող ա էլի սհենց,- ասըմ ա,-
ծախըմ եմ:

Ասըմ ա.- Ի՞նչ արժի էմ մի հողը:

Թե ասըմ ա.- Յուրաքանչյուր հողը տասը
մանեթ ա:

Թե ասըմ ա.- Ասա տենամ էտ ի՞նչ ա, ընչի՞
հմար ա, առ տասը մանեթ:

Տասը մանեթը տալիս ա և ասըմ ա.- Ասա,
պապաշա:

Ասըմ ա.- Էս մի հողը կենա եմ մարթու կըլ-
խին, որ իրան սրտի գաղտնիքը իր կնոջն ա-
սըմ ա:

Ասըմ ա.- Բա եմ մի հողը:

Ասըմ ա.- Էմ մի հողի տասը մանեթը տու՛
ասեն:

Էմ մի հողի տասը մանեթն էլ ա տալիս, ա-
սըմ ա.- Էս մի հողն էլ եմ մարթու կըլխին, որ ի-
րան հալալ ախպորը կըրախի, յաղ ախպեր
կփռին, էս մի հողն էլ նրա կըլխին:

- Բա, պապաշա ջան, էմ մի հողը:

Թե ասըմ ա.- Երա տասը մանեթն էլ տու:

Էմ տասը մանեթն էլ տալիս ա, ասըմ ա.-
Էտ նոր փող ունեցող, նոր հարուստ մարթից
եթե փող ես անըմ, էտ մի հողն էլ նրա կըլ-
խին, որ քյնացել ես ծեռնափոխ փող առել:

Էտ պոծավ: Վագիրը կյալիս ա տուն, փոր-
ցելու համար կնոջն ասըմ ա.- Այ կնիկ,- ասըմ
ա.- թաքավորի քեյրանը գողացել եմ բերել:

Գնըմ բազարիցը մի քոստո էժ առնըմ, էտ
քեյրանը տալի մի մարթու՝ պահըմ, էտ քոստո
էժը մորթըմ, ասըմ ա.- Օհ, էս ի՞նչ անուշ միս
ա քեյրանի միսը:

Կինը էլ մարթին ասըմ.- Էս ի՞նչ անուշ ա:

Սի քանի օրից եղը կնոջը մի լավ թակըմ ա,
և կնոջը թակելուց եղով կինը շորերը փոխըմ
ա, թաքավորն պալատը վագ տալի:

- Թաքավորն ապրած կենա, բա ասիլ չե՞ս,
քու քեյրանը իմ մարթը՝ քու վագիրը, պերուց
մորթեց, կերա՛վ:

- Պա՛, էս ի՞նչ պան էր, ա՛յ մարթ, բա վագի-
րը սհե պոն կանի՞, ջանլաթնի, հասեք ու վա-
գիրին ես թոպեխ պերեք, կախաղան եմ
պարցրացնըմ:

Բերին կախաղանի տակին կաղնացրին, են դրաղիցը փռնած ախպերն էլ էկավ կաղնեց, են նորաքիսա մարթն էլ: Նորաքիսա մարթն ա-սեց.- Այ սպասի, թաքավորն ապրած կենա, սպանիլ մի էտ մարթին, կախաղան մի պըրց-րցնի, ինձ հինգ ռուբլի ա պարտ, թող տա՝ ե-ղով:

Են, որն էլ ախպերացու էր, նա էլ ասըն ա.- Տենանք էս ո՞նց դի խեխտվիլ:

Են ախպերն էլ՝ թաքավորի ոտի տակին, պլետի տակին, տալիս ա սպանըմ ա թաքա-վորը:

- Ես քե մատաղ, թաքավորն ապրած կենա, ախպորս սպանիլ մի, քե հմար քեյրան կառ-նեմ:

- Չէ՛, որ պետք է կախաղան հանեմ:

Էտ, ում որ քեյրանը պահ էր տվել, ասեց.- Այ մարթ, պա՞ց թողի, տենըմ ես, որ ինձ խեխ-տըմ ա էլի թաքավորը:

Ձեյրանը պա՞ց թողեցին, թաքավորը մտիկ արավ տեխավ, որ, ա՛յ մարթ, քեյրանը ընդի բըխկըրիկալա ման ա կյալի, էտ մարթին էլ դարաղաքի ա քաշել, իրան ետեսուն տարեմ ծառայող վագիր խեխտըմ ա:

Թե ասեց.- Էս ի՞նչ պա՞ն էր, վագիր, էս ի՞նչ էր:

Թե ասեց.- Թաքավորն ապրած կենա, հի-շըմ ե՛ս, որ էն պապաշա մարթը, էն իրեք հո-ղով մասպեն ասեց, էտ հողերն էր, որ փորցել են: Էն կինս ա՝ դավաճան, էն էլ դրաղից փռնած ախպերացուն ա, էն էլ իմ հալալ ախ-պերն ա, որ քու դամշու տակին սպանըմ ես:

83(83). ՇԱՅ ԱՐԱՍԻ ՇՆՈՐԺԸ

Մի անգամ Շահ Աբասը դուրս ա գալիս իր ժողովրդի մեջ ման գալու: Տեսնում ա, որ մի խուլ կամրջի տակ՝ մթի մեջ մտած, երեք մարդ ինչ-որ բան են պայմանավորում: Մո-տենում ա և հարցնում.- Ի՞նչ եք անում:

- Որոշում ենք էս գիշեր գնանք շահի խազ-նեն կտրենք:

Ասում ա.- Ի՞նձ էլ ընկերացրեք:

Ասում են.- Իսկ դու ի՞նչ շնորք ունես:

Ասում ա.- Իսկ դուք ի՞նչ շնորք ունեք:

Մեկը ասում ա, որ ինքը բոլոր կենդանիե-րի լեզուն հասկանում ա:

Մյուսն էլ ասում ա.- Ես մատա ինչ կողպեքի վրա դնեմ, իսկույն կբացվի:

Երրորդն էլ ասում ա.- Ես խավարի մեջ տե-սած մարդուն, ցերեկը թիկունքից կճանաչեմ:

Շահ Աբասն էլ ասում ա.- Ես էնպես հատ-կություն ունեմ, եթե բելխ ոլորեմ, մարդկանց գլխատելուց կազատեմ:

Յետո գնում են խազնեն կտրելու: Շուքը սկսում ա հաչել, էն մեկը ասում ա.- Շունն ա-սում ա՝ տերը հետներդ ա:

Էն մեկն էլ մատը դնում ա կողպեքի վրա, դուռը բացվում ա, խազնեն շալակում են ու գնում: Խազնեն տանում են պահում և ամեքը իրանց տուն են գնում:

Առավոտը երեքին էլ բանտարկում են և տանում են գլխատեն: Որ տանում են գլխա-տեն, առաջները մի կուզիկ պառավ ա դուրս գալիս, ձեռը խփում ա դոշին, ասում ա.- Ջանս դուրս գա ձեզ համար, բա ըսենց իգիթ-ներին կգլխատե՞մ:

Էն մեկն ասում ա.- Քավթառ իմանա՞րդ, քեզ հետ ընկեր ընկնողը էս օրն կընկնի:

Տանում են գլխատելու, Շահ Աբասը բելխ ոլորըմ ա ու ասում.

- Ներել:

84(84). ՇԱՅ ԱՐԱՋՆ ՈՒ ԲԱՍԲԱՍՈՂ ԿՆԻԿԸ

Դե սովորաբար կանայք բամբասանքով շատ են զբաղվում, շատ էլ սուտ-սուտ պայմեր են ասըմ՝ ժողովուրդին պանիկայի մեջ քըրմ: Շահ Աբազը տենըմ ա, որ կարըմ չի էլի էտ կը-նամունց հախիցը կյա, էտ քաղաքըմ տհե մի հարիր-հարիր հիցուն կնիկ կա: Շահ Աբազը կարքաղըմ ա իրա նագիր-վեզիրներին, որ.- Քաղաքն ընգեք էտ տեսակ կընամունց իղվա-քեք պիրեք:- Սըըմ ա, կարքաղըմ ա, ասըմ ա.- Մի տեսեք որդի՞ մի տնորտով մարաք կա, տըրանց տարեք մի արեք:

Էտ հարիր իցցուն կընգա՞նը տանըմ են էտ մարաքն անըմ ու էրկու հատ լավ պահակ տը-նըմ, որ ինչ որ էտ կընամիքն ասըմ են՝ կյըրեն,

տիե քե դայոյի¹, որ տեման են չորս պատի մի-
չին են ինչ դեմ ասիլ: Վերջի կըմանիքը, որ
սամսեն են մարաքի վերջըն են ըլլմ, չուի վեր
են ունըմ տափը քանդըմ, թե էս ի՞նչ պանի մեչ
են ընգել, թե էս ընչի՞ են իրանց պիրել ըստի
արել: Հա՛, էտ չուի ծերիցը, էտ հողիցը մի
հատ տարծան ա տուս կալի, մի տասը սան-
տիմետրանոց մի հատ տարծան: Աղբեջանե-
րեն ասըմ են. «սաման չըխտի»²: Մինչև չեմըը
իրար ասիլեն, ասիլեն՝ կալիս ա տառըմ ա.
«շահը չըխտի»³

Պահակնին որ մանըմ են է՛, սարսափըմ են,
ասըմ են.- Պահ, ուրեմը շահը գործից տուս ե-
կալ:

Պահակների մինը մնըմ ա, մինը՝ պոյամը
պալատը՝ շահի կողըը, ասըմ ա.- Բա սիե, սիե,
ասըմ են շահը գործից տուս եկալ:

Շահ Աբազն ասըմ ա.- Տրանց հախիցը
մենք կարալ չենք կյանք, քյանցեք բըրախե-
ցեք, քյանցեք բըրախեցեք: Տրանք, որ էտ
չորս պատի ըրանքըմ տիե ասըմ են, մենք
տրանց հախիցը կարալ չենք կյանք:

Պահակը ետ ա կալի, որ տուռը պանց ա ա-
նըմ, ասըմ ա.- Ծեզ մի խորուրթ կտամ, որ էլ
բամբասանըվ չըզբաղվեք, թե չէ հաջորդ ան-
գամը ծեզ հվաքիլ դեն մարաքն ածեն ու մա-
րաքը կրալ տան:

Բոլորն էլ խոսքն են տալի, մի չառլամիշ ը-
լածը, թե.- Չէ՛ խի՞, բա իմ լեզուն կապիլ դի՞
Շահ Աբազը:

Տրան տանըմ են Շահ Աբազի մոտ, նրանց
թող են անըմ քյանց իրանց տները: Տրան տա-
նըմ են Շահ Աբազի մոտ, Շահ Աբազն ասըմ
ա.- Տարեք իմ են քառասուն կըմանունց մոտ,
տենանք ընդեղ ի՞նչ դի ասիլ:

Որ էտ ա տանըմ են մի քցըմ, դե քաղաքի
կնիկ ա էլի, բամբասանըքի կնիկ ա, սկսըմ ա
խոսիլը: Հասնողը կըլխին տալիս ա, հասնողը
կըլխին տալիս ա, տրան ախցան են անըմ
մեչտողը վե քցըմ: Սկսըմ ա բողբոլը, սկսըմ

ա լաչառուքին անիլը, որ.- Տարեք ինձ Շահ Ա-
բազի մոտ:

Վեր են ունըմ տանըմ: Որ տանըմ են, ասըմ
ա.- Ո՞նց ես, ի՞նչ ես:

Ասըմ ա.- Ինձ սպանըմ ին, հասնողը տվուց:

- Ուրեմը քեզ լալ չես պահել:

- Դե ի՞նչ պահեմ, նրանք մինն են ասել, ես
հազարն եմ ասել:

- Հա՛:- Կարքադըմ ա, ասըմ ա.- Տարեք մի
առանձին խուց քցեք տրան, օրական՝ մի
կտոր հաց, մի բաժակ էփած ճուր, էլ ոչ մի
պան:

Ասըմ ա.- Ինձ խուց մի քցիլ, էն ա ինձ ուզըմ
եք պատեք, լեզուն կտրի, տրանով պրծի:

Ասըմ ա.- Հա՞:

Էն ա լեզուն կտրըմ ա: Կնանիքը մանըմ են,
որ տրա լեզուն բամբասանքի հմար կտրել են,
էլ բամբասանըվ չեն զբաղվըմ:

85(85). ՏՆ, ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ա

Շահ Աբազը ամեն կենթանու, թռչունի լե-
զու հասկանալիս ա ըլել, լրիվ հասկանալիս ա
ըլել, էտ մարթը էտ բոլոր լեզուները՝ դուշն
ի՞նչ ա ասըմ, ապրանքն ի՞նչ ա ասըմ, մենակ
կըլխի չի ըլլըմ, թե շունն ընչի ա պոչը կըռը-
նըմ՝ պիրըմ չամբար անըմ: Էտ մինը գիղըմ չի:
Որ տենըմ ա հնար չկա, մի քանի դուրգաճը-
մուրգաճը ա կանչիլ տալի՝ պլոտնիկ, ասըմ ա.-
Սի դալիք շինեցեք, հաքին դըզեցեք ու մեխե-
ցեք, մի քանի տարի տիե պահեցեք, միզուցե
դըզվըմ ա՞:

- Դե շունը քառասուն տարի ապրըմ չի, ա-
սըմ ա.- քառասուն տարի տիե դալիքըմ պա-
հեցեք:

Պահըմ են, քառասուն տարուց հետո մարթ
ա հվաքվըմ, իրան պալատականների, պա-
նին պիրըմ են հանդիսավոր կերպով էտ դալի-
քը քանըմ: Դե շունն էլ իրան շնություն ա-
նիլ դի, էլի պոչը կեռըցըմ ա, չամբար անըմ,
տընըմ միջքի՞ն:

Ասըմ ա.- Ուրեմը սա սովորություն ա, ան-
հար ա, ուրեմը տալ էլ հսկացա, տալ սովորու-
թյուն ա:

1 Բանաստեղծ ճկատի ունի, թե բանահավաքն ինչ-
պես է գրի առնում իր ասածը (ծանոթ. բանահա-
վաքի):

2 Սաման չըխտի - տարծան տուս եկալ (ծանոթ.
բանասացի):

3 Շահը չըխտի - շահը գործից տուս եկալ (ծա-
նոթ. բանասացի):

86(86). ՇԱՀ ԱՔԱԶԸ ՊՈՋ ՈՒՆԻ

Էտ Շահ Աքազը կըլխին պոզ ա ունենըմ,
որդեղ քյընըմ ա, որ դալլաքի մոտ քյընըմ ա, հա՛
թրաշխիս, նրա կյուխը կտորըմ ա, քցըմ են դո-
լը: Դմի քյընըմ ա մի տեղ է՝ մի դալլաքի մոտ
էլ, ասըմ ա.- Չեմ ասիլ էլի,- ասըմ ա,- չեմ ա-
սիլ,- ասըմ ա,- իմ կըլուխը խի՞ ես կտորըմ:

- Լաւ,- ասըմ ա,- դե չի ասես:

Էտ դալլաքի փորը ճըղվըմ ա էլի, որ «Շահ
Աքազա բույնուզը վար՝ Շահ Աքազը պոզ ու-
նի»:

Դա՛, քյընըմ ա, քյընըմ ա մի ծորի միջի սիե
վրա ըռխին վեր ընգընըմ, ասըմ.- Շահ Աքազը
պոզ ունի:

Ըտեղ մի դուրուկ ա տոյուս կալի, դարդուս
էլի, թուքակ են շինըմ էլի, թուքակ: Թուքակ են
շինըմ, մըհի էտ անդեր թուքակն էլ ասըմ ա.
«Շահ Աքազը պոզ ունի՞, Շահ Աքազը պոզ ու-
նի»:

Առընըմ ե՞ս, թե՞ չէ: Վերըն, էտ ա տըհենց ա-
նիլեն, լուր ա ընգընըմ, որ Շահ Աքազին պոզ
ունի էլի:

87(87). ՇԱՀ ԱՔԱՆՈՒ ՎԱՍԱՆՈՒ ԱՇԽԱՏՈՐ ԽԱՆՈՒԹՊԱՆԸ*

Շահ Աքազը, իշխելու ժամանակը, միշտ
ուրուշ շոր ա հաքընըմ, թաքավորը, ման ա
կալի աշխար-աշխար: Բյընըմ ա՝ մի ըրուզու
տենըմ մի խանութպան, ուրեմը, առըտուր ա
անըմ, առըտուր անը՝մ, ըրուզուըն հըմքարըմ,
ընքելը.- Ըսոր էլ վնաս արի:

Որ մի քանի անքամ տիե քյընըմ ա տենըմ
ա՝ ամեն օր վնաս անըմ ա, քյընըմ ա նստըմ
հրաման կյորըմ, որ քաղաքընը, բացի ես խա-
նութից, ոչ մի խանութ պետք է պոց չիլի, պոց
չիլի, փակ պետք է ըլի: Մի կենդ էտ խանութը
դի պոց ըլի: Են խանութը պոց ա ըլըմ: Ե՛,
ժողովութ են էլի, թեքվըմ են են խանութը, էլ
պոն չեն անըմ: Բյընըմ ա ըլետ կաղընըմ տենըմ
հաշվեց, հաշվեց, ասեց.- Սոր էլ վնաս արի:

Բյընըմ ա նստըմ ու ասըմ.- Բյնացեք էն մար-
թին պիրեք:

Բյնըմ են են մարթին պիրըմ, ասըմ ա.- Ա՛,
ի՞նչ ազահ մարթ ես տու աշխարըմ: Ամբողջ
քաղաքընը ոչ մի խանութ էլ ա հիլ չեմ արել
պոց կենա, մի կենդ քունն են հիլ արել պոց
կենա, ըլետ ահըմ ես՝ վնաս արի:

Ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, բա ես
փողի միար սօր էլ ասըմ:

Ասել ա.- Բա ընչի միար ես ասըմ:

Ասել ա.- Իմ օրն ա, իմ գյանքը, իմ գյանքի
օրի միար սօր էլ ա անց կենըմ, սօր էլ անց կը-
ցալ:

Դմի, մատաղ քե, թաքավորն ինքն էլ ա գի-
դացել, տեհել, որ պոնըմ ոնց ա:

88(88). ՈՐՈՒ Ա ԱՇԽԱՏՈՐՈՒ ԱՍԵՆԱԿԵԹ ՊԱՆԸ*

Շահ Աքազը էտ ա իրա շրջելու ժամանակ
քյընըմ ա տենըմ՝ մի մարթ էտ զուքարանը
մաքըմ ա, հա՛մ մաքըմ ա, հա՛մ ասըմ ա.-
Նեղանալ մի, ա՛յ սիրտ, նեղանալ մի, քեզ կե-
շիցը կհանեն ավելի կեշի մեջ կկոխեն:

Դա՛: Ասըմ ա.- Աշխարիս ամենակեշը սա՛յա,
սրանից կեշ էլ պոն կա՞,- թաքավորն ա ասըմ:

Ու քյընըմ ա իրան գահին նստըմ ու մի էրկու
սաղոթա՞ դրզըմ, ասըմ.- Բյնացեք էտ մարթին
պիրեք:

Բյնըմ են, էտ մարթը հրաժարվըմ ա, չի կալ-
լի:

Բյնըմ են, թե.- Չի կալլի:

Ասըմ ա.- Բյնացեք, կալանըվորեցեք պիրեք:

Բյնըմ են ահըմ.- Կալընըվորված ես:

Ասըմ ա.- Դե որ կալընըվորված եմ, հիլ ա-
րեք, էն առուն քյընըմ ա, քյնամ առուն՝ ինձ
մաքընըմ ու հա՛ քյնացեք:

Բյնըմ ա մաքըմ, քյնըմ թաքավորի կուշ-
տը, ասըմ ա.- Թախտըտ ավաղ կենա, երգրի
իշխողն ես, ես ի՞նչ հանցանքի տեր եմ, որ ինձ
կալանավորըմ ես:

Ասըմ ա.- Որ քե կանչըմ են, խի՞ չես կալլի:

Ասըմ ա.- Ո՛ր կյամ է՛, ես հալեն մարթը ո՛ր
կյամ:

Ասըմ ա.- Բեզ կանչըմ են նրա համար, որ
տու այսինչ տեղը են կեշ պոնըմ թոմուզ իր ա-
նըմ, հա՛մ թոմուզ իր անըմ, հա՛մ ասըմ՝ նեղա-

նալ մի, ա՛ սիրտ, քեզ ես կեշիցը կհանեմ, ու-
րիշ կեշի մեջ կկոխեմ, տըրձնից կեշ պանը
ի՞նչ ա:

Ահըմ ա.- Թույլ կտա՞ս ասեմ, Շահ Աբբազը
ապրած կենա:

Ասըմ ա.- Ասա՛, բա ի՞նչ եմ կանչել:

Ասեց.- Քաղաքի դրադին մի կոկոլ շինած՝
միջին ապրըմ եմ, հինգ էլ ախճիկ ունեմ,
ուրուշ փեշակ չունեմ, էն ա տհե պաներ եմ ա-
նըմ, որ իմ ըրեխանցը պահըմ եմ: Համ էլ ա-
մեն քըշեր էլ օքմի ա կյալի իմ տուրը թակըմ,
ասըմ՝ տուրը պան արա, լիսին կյալիս ա՛ ճը-
րաքի լիսին: Որ տուրը պան անեմ էտ մարթը
կյա, էսքան հաց չըլի՜ դաքին տընեմ ուտի,
աշխարիս ամենակեշը տալ յա:

Ասըմ ա.- Մալադեց:

Ու հրամանը կյորըմ ա տալի ես մարթին՝ ալ-
սինջ տեղը տեղավորեցեք, որ լավ ապրի: Լավ
էլ ապրըմ ա, ըխճեկերնցն էլ ամուսնացնըմ ա:
Տու էլ սաղ ըլես, ամուսնանա:

89(89). ՇԱՀ ԱԲԲԱԶ ԿՆԻԿԸ*

Շահ Աբբազը քյընըմ ա տեներմ, որ մի երկու
ջահել, ուրեմը, զրից եմ անըմ:

- Էռնակ կըլի Շահաբբազի ծին իմ տակին
ըլի, միջկին նստեմ քշեմ, մուրազս առնեմ:

Էն մինը էլ ահըմ ա.- Էռնակ կըլի Շահ Աբ-
բազի կնիկն իմ ծոցըմ ըլի, մի քշեր քնեմ, որ
մեռնեմ էլ, ջանիս դարդ չըլի:

Շահ Աբբազը տեներմ ա՛ ինչ եմ զրից անըմ,
վազիրին կանչըմ ա:

- Օ՛հն,- ահըմ ա.- տարեք տվեք այսինչին:

Տանըմ եմ:

- Էնքան քշի, մուրազըս առնե:

Կյնզանն էլ ասըմ ա.- Այ կնիկ, էն մարթի
մուրազն էլ, նրա էլի, կանչեմ կյա, ուրեմը էն ը-
րեխին պատվի, ոնց որ կարքն ա, ընքելը ճըմ-
փու տի էն ջահելին:

Ասըմ ա.- Կանչի կյա:

Կանչըմ ա, կյալիս ա, գյոզդադընըմ կնիկ,
քյընըմ ա մի տաս-տասնիկն ծու էկըմ ու ջու-
ռա-ջուռա ներկըմ ա ու պիրըմ տընըմ ըղա-
քին, թե.- Բալա ջան, էտ ծղվանը կն ու ասա,
թե ո՞րն ա լավը. քե եղով, ինչ որ կուզես, քու
ուզածն ա,- ասըմ ա.- մին-մին էտ ծղվանը կն:

Ասըմ ա.- Հա:

Ուտըմ ա, ասըմ ա.- Չիմ մին ա:

Ասըմ ա.- Հա՞, բա, բալա ջան, կնանիքն էլ
չիմ մին եմ: Դե բարի ճանապար, բարի ճանա-
պար:

Շահ Աբբազը տհե մարթ ա ըլել:

90(90). ՇԱՀ ԱԲԲԱԶ ՆՈ ՉՈՒԹԶԻՆ*

Շահ օղլի Շահ Աբբազը, դուվրիշի ֆորըմը,
ման ա յալի կյուղերըմ: Կյալի տեներմ՝ մի կնի-
կարմատ կտերը նստած ճահին ա մանըմ:
Ժողովուրթին իրցընըմ ա, ասըմ ա.- Նա խի՞ ա
նհե անըմ, որ ճահիրը կտերը նստած մանըմ ա:

Թե ասըմ ա.- Մենք էլ չգիտենք, էն ա միշտ
նրա խասյաթը տհենց ա, տհենց էլ անըմ ա:

Պտտվըմ ա, ըրուգուրը կյալի տրա տուրը:

- Քույրիկ ջան, ղոնաղ չե՞ք ուզիլ:

- Պա՛, ղոնաղն աստծունն ա, դովրիշ բա-
բա, նստի:

Նստըմ ա, մտիկ անըմ տեներմ՝ իրա մարթը
չուրիցը լծկանով, եզնանցով վարատեղիցը
կյալիս ա: Էտ կնիկը ճահիրը վեր ա ունըմ դվե-
րըմ, կաղընը ընդի՝ մինը ինքն ա վե թողըմ եզ-
նանաց, մինը՝ մարթը, տանըմ տեղավորըմ:

- Դե՛, դովրիշ բաբա, քյնանք տուն:

- Ախչիկ ջան, քույրիկ ջան, ընչի՞ ես տհե
պան անըմ, տու՛ ճահիրը վիրը մանըմ, սա էլ
դաշտըմը՝ չուրիցը:

Ասըմ ա.- Դովրիշ բաբա, մենք որ օրին որ
իրար հանդիպել ենք՝ տա՛ դաշտըմն ա արևըմ,
անձրևըմ տուժվըմ, ես էլ վիրը պետք ա
տուժվըմ, որ մենք գիտենանք մենք իսկապես
հնգեր ենք և իրար հետ էլ ապրիլ դենք,
տնտեսության տեր տառնալ:

Ասըմ ա.- Շատ էլ լավ կըլի, շատ ապրես,-
ասըմ ա,- էտ որ մտածել ես:

¹ Բանասացն աջ ծեղքով ցույց է տալիս ձախ
ծեղքի ափը, դրանով ցանկանում է ասել, որ նույ-
նիսկ մի փոքրիկ կտոր հաց չունի, որ հյուրերին
հյուրասիրի (ծանոթ. բանահավաքի):

Էտ դովրիշ բաբին ղոնաղ են անըմ, հարգըմ, վեր ա կենըմ քյնըմ: Հա՛: քյնըմ ա: Էտ տղին հրամայըմ ա, որ կկաա ինմ մոտ:

Դեն թաքավոր ա Հահի օղլի Հահ Աբազը, շատ էլ դովրիշի ֆորմն ա մտել, ման ա կա՛լի: Ի՛նչ դի անիլ:

Ասըմ ա.- Բու են մի կնիկը կպիրեն, իրեքը կտանես:

Ասըմ ա.- Հատ էլ լավ կըլի: Բա թաքավորը կարգադրի, ես պիրեն ո՛չ:

Կա՛լիս ա տանըմ, իրեք կնիկ տալի տրան: Կա՛լիս ա մի ճրի ռաստ կա՛լի Էտ տղեն: Էտ կյուղացի ռանչպար տղեն շըլակտըմ ա կենդ-կենդ անց կըցըմ, ամեքի կանցագրութուն էլ մանըմ: Էտ մինը պինդ կաղըմ ա, ասըմ ա.- Ես կապրիզ եմ, որ կապրիզ եմ:

Էտ կապրիզին քցըմ ա ճրի մեչը, ասըմ ա.- Տու քյնա, ճիանք կբավարարեն:

Մի վախտ, մի տասն օրից եղը Էտ դովրիշ բաբեն կա՛լիս ա տենըմ, որ ա՛յ տղա, ընդով մինե էր կտերը ճահրը մանըմ, միի էրկուսն էլ՝ ամեքը՝ մինը՝ ճատած: Ըրուգուսն էլ Էտ չուր-չին կա՛լիս ա ամեքը մի եզը վեր են թողըմ, տանըմ իրան տեղն անըմ, հանգիստ իրանց համար ճատըմ:

Ասըմ ա.- Այ տղա, որ տուն էլ ես ետ շնորքը ունեցել, Էտ հարգանք, պատիվ, խնթեն,- ասըմ ա.- արի ետ բու մի կնիկը պի, ըտոնք ըլետ վե կալ տար իրանց տեղը տի, անց կենա քյնա:

91(91). ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ԹՈՌՈՒՆ

Հահալու Հահաբազն ու իրան վազիրը ճամփա են ընգընըմ, քյնըմ ման եկող: Քյնըմ են տեսնըմ, որ մի թռչի իրան համար ծուգն ա փռնըմ: Էտ թռչունը ասըմ են.- Այ մարթ, ինչո՞ւ ես զբաղվըմ:

Թե ասըմ ա.- Թոռն եմ քցըմ, օրական իրեք ծուգն եմ փռնըմ, իրեք մաֆար ենք, Էտ իրեք ձգնովը յուլա քյնըմ: Հմի հչվել լուգունը թոռն եմ քցել՝ ծուգ չկա, իրեքը փռնել եմ¹, մինը մնըմ ա:

Թե ասըմ ա.- Թոռչի բաբա, մի հատ թոռն էլ քցի իմ բախտիցը:

Թոռը քցըմ ա թոռչի բաբեն, երկու հատ ծուգն ա տուս կա՛լի, ոսկեգույն ձգներ:

Ասըմ ա.- Թոռչի բաբա, Էտ ձգների էքը ո՞րն ա, որքը ո՞րն ա:

Ձգները թոռչի բաբեն ծուրն ա քցըմ, ասըմ ա.- Ամոթ ըլի քեզ, Հահի օղլի Հահաբազ, տու Հահի օղլի Հահաբազն ես, ոչինչ չես հասկանում աշխարհս, քյնա:

Էտ Հահի օղլի Հահաբազը ըտեղից, իրան գործը թող արած, հետ ա գալի իրան աթոռին ճատըմ, ասըմ ա.- Էս լուպիս թոռչի բաբային պերեք խփենք:

Պերըմ են թոռչի բաբային կաղնացնըմ, ասըմ.- Թոռչի բաբա, ընչի՞՞ հմար ես էսենց բաներ ասել Հահի օղլի Հահաբազին:

Թե ասըմ ա.- Թաքավորութիւնը ինմ տու, ես ասեմ՝ ձգների էքը որն ա, որքը որն ա:

Թե ասըմ ա.- տվի էրկու ժամով թաքավորութիւնը քեզ:

Ասըմ ա.- Քանի՞ կնիկ ունես, Հահի օղլի Հահաբազ:

Ասըմ ա.- Քառասուն:

- Քանի՞ հատ քո՞ ունես յուրաքանչյուր կնգանըլ:

Թե.- Մի հատ:

- Քո՞ները մի սենյակ արա, կանայքը մի սենյակ արա, ես պատմեմ քեզ:

Կանայք մի սենյակ անըմ ա, Էտ թոռչի բաբան թաքավորի տեղը, քո՞ներն էլ մի տեղ անըմ ա, ասըմ ա.- Տկլորի՞, հրամայըմ եմ:

Տկլորըմ ա Հահի օղլի Հահաբազը նրանց քառասունին էլ՝ քառասուն նրանք են, քառասուն էլ՝ նրանք, ասըմ ա.- Պերձա, թաքավորն ապրած կենա:

Ասըմ ա.- Դե հանքի ըստեղ շարք կաղնացրու,- ասըմ ա:

Շարք ա կաղնացնըմ, կնանիքը առանձին, մարթիքը առանձին՝ երես-երեսի կաղնած, տենըմ ա, որ բոլորը յուրաքանչյուր կնիկ անեն մի քո՞ծը իրան մարթն ա, ոչ թե քո՞ծ ա պահըմ, մարթ ա պահըմ:

Ասըմ ա.- Հահի օղլի Հահաբազ, ոնց որ տու քու պալատըմ չես ճընանջըմ էքն ու որքը, ես էլ քրի մեչ չեմ ճընանջըմ ձգան էքն ու որքը:

¹ Բանասացը շփոթում է, պետք է երկու ծուկ ասի (ծանոթ. բանահավաքի):